

Ուսուցչի ձեռնարկ

8

Հնազանդություն Աստծուն

Սովորել հնազանդվել Աստծո առաջնորդությանը



Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Հնազանդություն Աստծուն

Սովորել հնազանդվել Աստծո առաջնորդությանը

Չեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում



Հնազանդություն Աստծուն

Ուսուցչի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Growing Through Failure, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Մտուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Հնազանդություն Աստծուն

Սովորել, թե ինչպես սիրել և հնազանդվել Աստծուն՝ որոշ մարդկանց համար ավելի հեշտ է լինում, քան մյուսների: Մեզնից շատերի համար դժվար է սիրել մի մարդու, ում տեսնել չենք ուզում: Սովորել լսել Աստծուն և իմանալ, թե ինչ է Նա ուզում, որ դու անես, շատ կարևոր ունակություն է, որը նորադարձ քրիստոնյաները պետք է արագ սովորեն: Այս դասընթացի հիմնական նպատակն է գտնել գործնական ձևեր, որով մենք կարող ենք արտահայտել մեր հնազանդությունն Աստծո հանդեպ:

1

Գլուխ 1. Մեր և հնազանդություն

Այն ներառում է ուսուցում այն մասին, թե ինչու պետք է քրիստոնյաները հնազանդվեն Աստծուն: Մենք նաև խորաթափանց հայացք կզգենք Աստծո մեծագույն օրենքների:

2

Գլուխ 2. Վերաբերմունքներ և հնազանդություն

Այս գլխում մենք քննարկելու ենք, թե ինչ դեր ունեն մեր վերաբերմունքները մեր վարքի մեջ: Հատուկ ուշադրություն է դարձվում հնազանդ վերաբերմունքներ զարգացնելու վրա:

3

Գլուխ 3. Ո՞ր օրենքներին ես պետք է հնազանդվեմ

Այս գլուխը վերաբերում է քրիստոնյայի պատասխանատվությանը Աստվածաշնչում եղած Աստծո օրենքների հանդեպ: Մենք քննարկելու ենք, թե ինչպես մարդը կարող է զանազանել յուրաքանչյուր օրենքի հետևում եղած սկզբունքը և դրանք կիրառել ամենօրյա կյանքում: Այս բաժինը նաև ներառում է ուսուցում այն մասին, թե որն է Աստծո կամքը քրիստոնյաների համար:

4

Գլուխ 4. Աստծուն հնազանդվելու արդյունքները

Այն, ինչ սկզբում կարող է դժվար թվալ, կոնկրետ՝ Աստծուն հնազանդվելը, բերում է դրական արդյունքներ: Մենք հետազոտում ենք օրինակներ Աստվածաշնչից և այսօրվա կյանքից տեսնելու համար Աստծուն հնազանդվելու արդյունքները:

5

Գլուխ 5. Աստծուն չհնազանդվելու արդյունքները

Այս գլխում մենք քննարկելու ենք Աստծուն չհնազանդվելու արդյունքները՝ հետազոտելով բնական հետևանքները, դաստիարակությունը, պատիժը և վրեժխնդրությունը, որոնք կապ ունեն անհնազանդության հետ: Մենք նաև ուսումնասիրելու ենք այն դասերը, որոնք կարող ենք սովորել ուրիշների անհնազանդությունից:

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախաբան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Ցուցակ* -ի մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Մրա կարևորությունը չի կարող գերազանահասվել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզված

եղեք, որ բավականաչափ ժամանակ էք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել 3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող էք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող էք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող էք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս էք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ: Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք,

ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թուուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ձախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնագանդություն Աստծուն
9. Հնագանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Մեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «*Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*» գիրքը:

Դասի ծրագրեր ուսուցիչների համար

Տե՛ս սույն Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջը՝ այս դասերի ծրագրերի օգտագործման վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Դասի ընդհանուր նկարագրություն

1. Դասից մեկ կամ երկու օր առաջ դու կարող ես ներկայացնել այս դասընթացը քո ուսանողներին և նրանց տալ առաջին մի քանի հանձնարարությունները: Ուսուցման ուղեցույցի առաջին նախագիծը պետք է կատարվի նախքան առաջին դասաժամը: Բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկը և ուսանողներին հանձնարարի՛ր կարդալ 1-ին գլուխը, որը քննարկելու եք առաջին դասաժամին:
2. Սույն Ուսուցչի ձեռնարկի հաջորդ էջում դու կգտնես *Դասարանական հանձնարարության ցուցակի* մի օրինակ, որտեղ գրված են ամսաթվերը, թե երբ պետք է յուրաքանչյուր հանձնարարություն կատարվի: Թող քո ուսանողները լրացնեն համապատասխան ամսաթվերը՝ օգտագործելով *Դասարանական հանձնարարության ցուցակի* դատարկ օրինակը, որը գտնվում է Ուսուցման ուղեցույցի վերջում:
3. Յուրաքանչյուր դասի ծրագիր ներառում է մեկ կամ ավելի «Դասի ջերմացման գործողություն»՝ դասի սկզբում օգտագործելու համար: Այս գործողությունների հիմնական նպատակն է օգնել ուսանողներին, որպեսզի իրենց ուշադրությունը կենտրոնացնեն դասի հիմնական թեմային: Մենք ուզում ենք ջերմության և անկեղծության մթնոլորտ ստեղծել, որտեղ բոլոր ուսանողներն ազատորեն կմասնակցեն դասի քննարկմանը:
4. Այս դասընթացը սերտորեն կապված է *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի *Հնազանդություն մարդուն* բաժնի հետ: Դասընթացն ուսուցանելիս ուշադի՛ր եղիր, որ չափից ավելի ժամանակ չհատկացնես մեր առաջնորդներին հնազանդվելուն, քանի որ դա անցնելու եք մեկ այլ դասընթացի ժամանակ: Պարզ է, որ աստվածաշնչյան սկզբունքները մասամբ կհամընկնեն իրար, երբ հարցը վերաբերում է Աստծուն և մեր առաջնորդներին հնազանդվելուն:
5. Եթե քո ժամանակացույցը թույլ է տալիս հինգ դասաժամից ավել ուսուցանել այս դասընթացի ժամանակ, կարող ես 3-րդ դասը բաժանել (Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը) և ավելացնել լրացուցիչ դասաժամ՝ «Ի՞նչ է «Աստծո կամքը» թեման ուսուցանելու համար: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 31-34-րդ էջերը: Ուսուցչի դասի ծրագրի 3-րդ կետի 14-րդ և 15-րդ կետերը վերաբերում են այս թեմային, որը սույն Ուսուցչի ձեռնարկի 40-41-րդ էջերում է:

Դասարանական Հանձնարարության Ցուցակ

Դասընթացի անվանումը _____ Հնագանդություն Աստծուն _____

Հարցաշար	Անգիր համարներ	Ամսաթիվ
1	_____ Մարկոս 12:30 _____	_____ օր 2. _____
2	_____ Հովհաննես 13:34-35 _____	_____ օր 3. _____
3	_____ _____	_____ _____

Նախագծեր	Ամիս, ամսաթիվ
1	_____ օր 1. _____ Աստվածաշնչի խորհուրդներն _____ Աստծուն հնագանդվելու վերաբերյալ _____
2	_____ օր 2. _____ Աստծուն հնագանդվելու իմ դրդապատճառները _____
3	_____ օր 4. _____ Աստծուն հնագանդվելու և չհնագանդվելու _____ հետևանքները _____
4	_____ օր 3. կամ 4. _____ Ավելի մոտ հայացք Աստծո օրենքներից մեկին _____ _____ _____

Ստուգարք Ամսաթիվ _____ օր 5. _____

1

Դաս 1.**Մեր և հնազանդություն****1. Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն:**

Աստծուն հնազանդվելու լավագույն ձևը իմ սերն Աստծո հանդեպ իմաստալից կերպով արտահայտելն է ամենօրյա կյանքում:

2. Բանալի համար. Մարկոս 12:30.

«Եվ սիրի՛ր քո Տեր Աստծուն ամբողջ սրտովդ, ամբողջ հոգովդ, ամբողջ մտքովդ և ամբողջ զորությամբդ». սա է առաջին պատվիրանը»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 1-ին գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 1-ինի՝ «*Աստվածաշնչի խորհուրդներն Աստծուն հնազանդվելու վերաբերյալ*» բաժինը նույնպես կօգտագործվի այս դասի հետ:

4. Դասի ջերմացման գործողություն (5 րոպե):

Օգտագործի՛ր հետևյալ գործողություններից որևէ մեկը՝ ուսանողներին օգնելու համար, որպեսզի իրենց ուշադրությունը կենտրոնացնեն այս դասի թեմայի վրա՝ «Հնազանդվել Աստծուն»:

Ա. «Աստծո հետ կնքած գործարքներ»: Հարցրո՛ւ ուսանողներին, թե երբևէ փորձե՞լ են նրանք գործարք կնքել Աստծո հետ: Միգուցե նրանք ծանր վիճակում լինելով ասել են. «Աստվա՛ճ, եթե Դու ինձ օգնես այս նեղ իրավիճակից դուրս գալու համար, ես իմ ամբողջ կյանքում կծառայեմ Քեզ»: Դու կարող ես այսպիսի «գործարքների» մեկ-երկու օրինակ բերել, որոնք մարդիկ կնքել են Աստծո հետ: Ուսանողներին էլ առիթ տուր, որ պատմեն Աստծո հետ իրենց կնքած գործարքների մասին:

Բ. Օրինա՛կ բեր քո (կամ այլ քրիստոնյայի) կյանքից, երբ Աստված քեզ ինչ-որ բան է ասել, որ անես: Քեզ, հնարավոր է, այդ պահին թվացել է, որ տվյալ արարքը կատարելը սխալ է, սակայն, այնուամենայնիվ, որոշել ես հնազանդվել Աստծուն: Արդյունքում իրավիճակը շատ ավելի լավ շարունակություն է ունեցել, քան դու կարող էիր ակնկալել: Աստված դրանով քեզ ցույց է տվել, որ Իրեն հնազանդվելն առաջ գնալու լավագույն ձևն է:



Գ. Բեմադրե՛ք փոքրիկ ներկայացում՝ ‘Let’s trade your salvation’ («Արի՛ առևտուր անենք քո փրկությունով») վերնագրով՝ “Fun In the Son,” ձայնագրությունից, հեղինակ՝ Isaac Air Freight (1978, Maranatha Music, Costa Mesa, CA): Այս հումորային ներկայացումը հաջորդում է հեռուստատեսային խաղի շոուին: Մի քրիստոնյայի հնարավորություն է տրվում՝ վաճառել իր փրկությունը տարբեր նվերների դիմաց:

5. Փոխել Աստծո հետ փոխհարաբերությունները (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 4-րդ:

Եթե քո դասարանը հիմնականում կազմված է նորադարձ քրիստոնյաներից, ապա, հավանական է, որ նրանք բոլորովին վերջերս մեծ փոփոխություններ են ունեցել Աստծո հետ իրենց փոխհարաբերությունների մեջ: Աստծո հետ այս նոր փոխհարաբերությունը նրանց հիմք է տալիս ամբողջությամբ նոր ապրելակերպի համար: (Հղում Ուսանողի ձեռնարկի 4-րդ էջին):

Ճշմարիտ քրիստոնյա դառնալով նրանք Աստծուն խնդրել են՝ դառնալ իրենց կյանքի Առաջնորդը: Տե՛ս Կողոսացիներին 1:21-22-ը: Հովհաննես 1-12-ում և Գաղատացիներին 3:26-ում, քրիստոնյաները նկարագրվում են որպես Աստծո զավակներ: Աստված պատասխանատվություն է վերցնում Իր վրա՝ լինել նրանց Առաջնորդը, նրանց Հայրը: Նա նորադարձ քրիստոնյաներին Իրեն հնազանդվելու պատասխանատվություն է տալիս:

Աստծուն հնազանդվելու այս թեման ուսումնասիրելիս ուսանողներին քաջալերիր՝ հետևալ հարցերը իրենք իրենց տալու համար.

- Ի՞նչ է նշանակում լինել Աստծո որդի կամ դուստր:
- Ինչպե՞ս կարող ենք փոխհարաբերություններ զարգացնել Մեկի հետ, ում չենք տեսնում:
- Ինչպիսի՞ փոխհարաբերություն էս պետք է ունենամ Աստծո հետ:

6. Քննարկի՛ր Ա-1 կետը. «Ինչպիսի՞ փոխհարաբերություններ էս դու այսօր արժևորում» (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 5-րդ էջեր:

Ա. կետը՝ «Նոր փոխհարաբերությունների կարիքը», ունի երեք ենթակետ: Դրանք օգնում են հիմք դնելուն այս առաջին դասի համար: Ուշադի՛ր եղիր, որպեսզի խորը մանրամասնությունների մեջ չմտնես այս թեմայի շուրջ: Բ-Ե կետերն այս դասից ավելի շատ ժամանակ են պահանջում:

1

Շեշտի՛ր, որ կարևոր է, որ ամեն մեկը ժամանակ հատկացնի՝ պատասխանելու 1-ին հարցին. «Ինչպիսի՞ փոխհարաբերություններ ես դու այսօր արժևորում»:

Այսօրվա աշխարհում երիտասարդները մեծանում են մի մշակույթի պայմաններում, որը նրանց հեղեղում է փոխհարաբերությունների վերաբերյալ այնպիսի գաղափարներով, որոնք շատ հակասատվածաշնչյան են: Մեկ այլ հարց է այն, որ շատերը մեծացել են բարդություններով ընտանիքներում, որտեղ նրանք չեն ունեցել ընտանեկան առողջ փոխհարաբերություններ:

Այս դասընթացի հիմքն այն է, որ մեզնից ամեն մեկը պետք է մեծ արժեք տա Հիսուս Քրիստոսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելուն: Մա ավելին է, քան մի պարզ աղոթք անելը մեղքերից ազատվելու համար:

7. Քննարկի՛ր Ա-2. կետը. «Ինչպե՞ս աճեցնենք նոր փոխհարաբերություններ» (2-3 բոլակ), Ուսանողի ձեռնարկ, էջ 5-6-րդ:

Այս քննարկումը շատ համառոտ անցիր:

Ընդգծի՛ր փոխհարաբերություններին վերջ դնելու կարևորությունը այն մարդկանց հետ, ովքեր մեզ հետ են քաշում մեր մեղսալից կյանքի հին ապրելակերպի մեջ:

Հիմա, երբ նրանք որոշել են ճշմարիտ քրիստոնյա դառնալ, պետք է որոշեն նոր փոխհարաբերություններ կառուցել: Խնդրի՛ր նրան՝ կիսվել իր փորձառությամբ՝ ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո նոր փոխհարաբերություններ զարգացնելու հարցում:

Հարցրո՛ւ. «Ինչպե՞ս ես դու Աստծո հետ ավելի խորը փոխհարաբերություն զարգացնում»: Քննարկումը թող համառոտ լինի: Մի քանի պատասխաններով կիսվելուց հետո նրանց ուշադրությունն ուղղի՛ր Ուսանողի ձեռնարկի 5-6-րդ էջում թվարկված կետերին: Մատնանշի՛ր, որ այս դասընթացի մնացած մասում մենք կկենտրոնանանք Աստծո հետ ավելի խորը փոխհարաբերություն կառուցելու ձևերից մեկի վրա, որն է՝ «հնազանդվել Աստծուն»:

Թվարկված մյուս հարցերից յուրաքանչյուրը նույնպես շատ կարևոր է, սակայն մենք դրանք կքննարկենք մեկ ուրիշ անգամ, ոչ թե *Հնազանդություն Աստծուն* դասընթացում:



8. Քննարկի՛ր Ա-3. կետը. «Աստված ուզում է լինել քո Հայրը» (5-7 բոյալե), Ուսանողի ձեռնարկ, 6-8-րդ էջեր:

Այս կետի քննարկումները սկսի՛ր՝ քո ուսանողներին հանձնարարելով կարդալ Բ Կորնթացիներին 6:18-ը: Մատնանշի՛ր Աստծո ուզած առանցքային փոխհարաբերությունը: Նա ուզում է, որ մենք լինենք Նրա որդիներն ու դուստրերը:

Բ Կորնթացիներին 6:18
«Ես կլինեմ ձեր Հայրը, իսկ դուք կլինեք իմ որդիներն ու դուստրերը», - ասում է Ամենակարող Տերը»:

Քննարկի՛ր «հայր» հասկացության հետ կապված խնդիրները՝ ինչպես նկարագրված է Ուսանողի ձեռնարկի 6-7-րդ էջերում: Քո դասարանի ուսանողներին խնդրի՛ր կիսվել իրենց հայրերի հետ ունեցած փորձառությամբ, և թե որքանով են դրանք նման կամ տարբեր Հեղինեի և Էրիկի օրինակներից:

Այս պահին մենք չենք փորձում լուծել անցյալի բոլոր խնդիրները, այլ պարզապես ցանկանում ենք մատնանշել, որ եթե քո ուսանողները ընտանեկան ծանր անցյալ են ունեցել, ապա կարող են ավելի մեծ դժվարություն ունենալ այդ ցավի վրայից անցնելիս: Բայց և այնպես, Աստված ուզում է դրական, անմիջական, անձնական փոխհարաբերություն ունենալ նրանց հետ: Նա ուզում է դառնալ նրանց հայրը, որ նրանք անցյալում չեն ունեցել:

Դու կարող ես նաև անդրադառնալ Ուսանողի ձեռնարկի 7-րդ էջերում գտնվող անձնական փոխհարաբերություններին վերաբերող մի քանի արտահայտությունների: Դու, հնարավոր է, ժամանակ չունենաս դրանցից ամեն մեկն առանձին-առանձին մանրամասնորեն քննարկելու համար, այդ դեպքում քաջալերի՛ր նրանց՝ դրանք ուսումնասիրել իրենց ազատ ժամանակ:

9. Անցկացրո՛ւ Բ. Կետը. «Ի՞նչ տեղ ունի հնագանդությունը Աստծո հետ իմ փոխհարաբերության մեջ» (3-5 բոյալե), Ուսանողի ձեռնարկ, 8-9-րդ էջեր:

Արագ անցի՛ր այս քննարկումը:

Հարցրո՛ւ քո ուսանողներին. **«Ի՞նչ տեղ ունի Աստծո օրենքներին հնագանդվելն Աստծո հետ առողջ փոխհարաբերությունների մեջ»:**

Նրանց պատասխանելուց հետո մատնանշի՛ր, որ այդ սահմաններն Աստծո ձևն են մեզ պաշտպանելու համար: Դրանք մեզնից չեն գողանում մեր

1

ազատությունը, դրանք պաշտպանում են մեզ, որպեսզի մենք կարողանանք իրական ազատություն վայելել մեր առօրյա կյանքում:

Մի՛ մտիր 1-ին ենթակետի մանրամասն քննարկման մեջ, այլ քո քննարկումը հիմնականում կենտրոնացրո՛ւ 2-րդ կետի՝ «Աստծո մեծագույն օրենքները» բաժնի վրա: Թող քո ուսանողները կարդան Մատթեոս 22:35-40-ը:

10. Քննարկի՛ր Գ. կետը. «Ինչո՞ւ հնազանդվել Աստծուն» (3-5 բոլորակ), Ուսանողի ձեռնարկ, 9-11-րդ էջեր:

Համառոտ անցի՛ր այս քննարկումը:

Ընդգծի՛ր Ուսանողի ձեռնարկի 9-10-րդ էջում գտնվող այս բաժնի առաջին երկու պարագրաֆներում գտնվող կետերը: Մերն ու հնազանդությունը շատ սերտորեն կապված են միմյանց հետ:

Թող ուսանողները կարդան Հովհաննես 14:15-ը, և քննարկեք սիրո և Աստծո օրենքներին հնազանդվելու միջև եղած կապը: Մատնանշի՛ր, որ ամեն անգամ, երբ մենք հնազանդվում ենք Աստծո օրենքներից որևէ մեկին, մեր գործողությունն Աստծուն ասում է. «Ես Քեզ սիրում եմ»:

11. Քննարկի՛ր Դ-1. կետը. «Ինչպե՞ս սկսեմ սիրել Աստծուն» (3-5 բոլորակ), Ուսանողի ձեռնարկ, 11-12-րդ էջեր:

Թող քո ուսանողները կիսվեն, թե ինչպես են սովորում ցույց տալ իրենց սերն Աստծո հանդեպ: Եթե նրանք դժվարանան պատասխանել, ուրեմն թող կարդան Ա Կորնթացիներին 13գ-ը՝ տեսնելու այն գործնական ձևերը, որով նրանք կարող են ցույց տալ իրենց սերն Աստծո հանդեպ:

Մատնանշի՛ր, որ Աստծուն սիրելը սահմանափակված չէ միայն Աստծուն ուղղված գործողություններով, այլ նաև ներառում է այն, թե ինչպես ենք մենք վերաբերվում մարդկանց հետ:

Թող քո ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ձեռնարկ, Նախագիծ 1-ինի 2-րդ և 3-րդ հարցերին:

Հարց 2. **«Ինչպե՞ս է Հակոբոսը նկարագրում Աստծո օրենքները Հակոբոս 1:25-ում»:**

Հարց 3. **«Ի՞նչ է ասում Հակոբոսը, որ ես պետք է անեմ, եթե ուզում եմ հնազանդվել Աստծո օրենքներին (Հակոբոս 1:25): Գրի՛ր երկու պատասխաններ»:**



12. Քննարկի՛ր Դ-2. կետը. «Ի՞նչ անեմ, եթե ուժ չունեմ Աստծուն հնազանդվելու» (3-5 բույս), Ուսանողի ձեռնարկ, 12-13-րդ էջեր:

Թող քո ուսանողները կարդան և քննարկեն այս երկու համարները՝ Բ Տիմոթեոս 1:7 և Բ Կորնթացիներին 12:9, որոնք ուղղակի խոսում են այս թեմայի վերաբերյալ: Մատնանշի՛ր, որ մենք կարող ենք ամեն օր ավելի ուժեղանալ՝ Աստծո խոստումներին հենվելով՝ ներառյալ այս երկու համարները:

Ընդգծի՛ր Աստծո օրենքներին հնազանդվել ցանկանալու կարևորությունը:

13. Քննարկի՛ր Դ-3. կետը. «Ի՞նչ անեմ, եթե ես Աստծո հանդեպ սեր չեմ զգում» (3-5 բույս), Ուսանողի ձեռնարկ, էջ 13-րդ:

Դիմի՛ր Ուսանողի ձեռնարկի 13-րդ էջին: Սկսի՛ր քննարկումով, թե ինչպես է մեր ժամանակակից մշակույթը նկարագրում սերը՝ հաճախ կենտրոնանալով սիրո «զգացմունքների» վրա:

Սակայն իրական սերն ավելին է, քան զգացմունքը. այն սրտի որոշում է: Դա որոշում է՝ սիրով վարվելու դիմացինի հետ՝ խոսքերով, վերաբերմունքով, գործողություններով և մտքերով:

Մատնանշի՛ր, որ Աստվածաշնչի մեծագույն պատվիրանը մեզ չի պատվիրում որոշակի զգացմունքներ ունենալ Աստծո հանդեպ:

Թող ուսանողներից մի քանիսը կիսվեն, թե ինչպես նրանց զգացմունքներն Աստծո հանդեպ փոխվեցին, երբ նրանք դարձան ճշմարիտ քրիստոնյաներ: Նրանք Աստծուն առանձնահատուկ ձևով սկսեցին զգալ: Նրանց սիրտը կարծես սիրով հեղեղվեց: Կամ, միգուցե, հակառակը. նրանք, հիմնականում, ոչինչ չէին զգում:

Շտապի՛ր մատնանշել, որ սովորաբար երկու ձևով էլ լինում է՝ Աստծո հանդեպ մեծ սերը, կամ Աստծո հանդեպ առանձնահատուկ զգացմունքներ չունենալը. ոչ մեկն էլ սխալ չեն:

Աստծո հետ մեր փոխհարաբերությունների մեջ աճելիս մենք կսկսենք ավելի շատ սեր զգալ Աստծո հանդեպ, երբ մեր գործողություններն ու մտքերը կենտրոնացած են Աստծուն սիրելու և Նրան հնազանդվելու վրա:

Շատերը, ովքեր հատուկ զգացմունքներ ունեն Աստծո հանդեպ, կարող են մի օր արթնանալ և տեսնել, որ այդ զգացմունքները չկան: Դա չի նշանակում, որ Աստված թողել է նրանց: Դա չի նշանակում, որ դու այլևս չես սիրում Աստծուն: Զգացմունքները գալիս ու գնում են, և դա նորմալ է: Անկախ այն

1

բանից, զգո՞ւմ ենք մենք սեր, թե՞ ոչ, պետք է շարունակենք քայլել հնազանդության մեջ Աստծո և Նրա օրենքների հանդեպ:

14. Քննարկի՛ր Ե. կետը. «Ի՞նչ տեղ ունեն դրդապատճառներն Աստծուն հնազանդվելու մեջ» (5 բույե), Ուսանողի ձեռնարկ, 14-15-րդ էջեր:

Համառոտ քննարկի՛ր այս կետը՝ որպես այս դասի վերջին հարց: Հնարավոր է՝ դու ժամանակ չունենաս ավելի մանրամասն քննարկելու այս հարցը:

Առաջինը՝ համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են «դրդապատճառ» բառի սահմանումը:

Մատնանշի՛ր, որ դրդապատճառներն անձնական հարց են քո և Աստծո միջև: Մենք չենք կարող նայել քո սրտի մեջ և տեսնել, թե ինչ դրդապատճառներ դու ունես: Այնպես որ, սա շատ անձնական հարց է: Բայց և այնպես, Աստված հաստատ տեսնում է մեր դրդապատճառները՝ ինչպես նշված է Առակաց 21:2 և 20:27 համարներում:

Ընդգծի՛ր կարևորությունը, որ սերը պետք է լինի մեր գերագույն դրդապատճառն Աստծուն հնազանդվելու հարցում: Վախը մեկ այլ դրդապատճառ է. դժոխք գնալու վախը, եթե անհնազանդ լինեմ: Սակայն մենք կարիք ունենք վախից ավելի խորը անձնական փոխհարաբերություն զարգացնել Աստծո հետ:

Քննարկի՛ր Աստծուն հնազանդվելու այլ հնարավոր դրդապատճառներ, որոնցից են՝ մեղավորության զգացումը, պարտավորությունը, մանիպուլյացիան:

16. Անձնական կիրառություն (5-15 բույե):

Այսօր անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ երկու բաների վրա.

- 1) Նրանք պետք է գտնեն մի քանի գործնական ձևեր, թե ինչպես կարող են ցույց տալ իրենց սերն Աստծո հանդեպ: Քաջալերի՛ր նրանց՝ ընտրել փոքրիկ գործողություններ, որ նրանք կարող են պարբերաբար անել Աստծո համար իրենց առօրյա կյանքում: Ընդգծի՛ր շարունակականության կարևորությունը:
- 2) Քաջալերի՛ր նրանց, որպեսզի սերը դարձնեն Աստծուն հնազանդվելու իրենց հիմնական դրդապատճառը: Քաջալերի՛ր նրանց՝ նաև հաստատուն որոշում ընդունելու՝ Աստծուն



հնագանդվելու վերաբերյալ: Դա պետք է լինի նրանց կյանքի գլխավոր առաջնայնությունը:

Որպես անձնական կիրառության քայլ՝ թող յուրաքանչյուր ուսանող Աստծուն ուղղված աղոթք գրի՝ շնորհակալություն հայտնելով Նրան՝ իր Առաջնորդը լինելու համար: Ասա՛ նրանց, որ արտահայտեն իրենց սերը Նրա հանդեպ և իրենց ցանկությունը՝ հնագանդվելու Նրա օրենքներին: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի խոսեն Աստծո հետ՝ Նրան հնագանդվելու իրենց դրդապատճառների մասին:

Որից հետո թող ուսանողները բաժանվեն զույգերի և իրենց աղոթքը կարդան մեկը մյուսի համար:

Թող նրանք վերանայեն ողջ օրը, թե ինչպես կարող են գործնական ձևով արտահայտել իրենց սերն ու հնագանդությունն Աստծո հանդեպ: Բացատրի՛ր, թե ինչպես է Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինը համընկնում սրա հետ:

16. Հանձնարարություններ:

- Ա. Եթե դեռ չես արել, բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկներն այս դասընթացի համար: Թող նրանք կարդան Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը՝ նախքան հաջորդ դասաժամը:
- Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի՝ *«Աստվածաշնչի խորհուրդներն Աստծուն հնագանդվելու վերաբերյալ»* բաժնի համար:
- Գ. Դու կարող ես քո ուսանողներին հանձնարարել՝ կարդալ Ա Թագավորաց 15-րդ գլուխը հաջորդ դասաժամի համար: Տե՛ս 2-րդ դասի համար Դասի ծրագրի 7-րդ կետը (էջ 22)՝ այս դասի վերաբերյալ ավելի շատ տեղեկություն ստանալու համար:

17. Դասի գնահատում:

- Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
- Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
- Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
- Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 2.

Վերաբերմունքներ և հնազանդություն

2

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Քրիստոնյաները պետք է հնազանդ վերաբերմունք զարգացնեն, որպեսզի օգտագործեն դրանք Աստծուն և Նրա օրենքներին հնազանդվելիս:

2. Բանալի համար:

Փիլիպպեցիներին 2:5.

«Նույն միտքը թող լինի ձեր մեջ, ինչ Հիսուս Քրիստոսի մեջ էր»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-ի՝ «Աստծուն հնազանդվելու իմ դրդապատճառները» բաժինը նույնպես կօգտագործվի այս դասի հետ:

4. Դասի ջերմացման գործողություն (5 րոպե):

Դասը սկսի՝ ր՝ քննարկելով Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի՝ «Աստծուն հնազանդվելու իմ դրդապատճառները» բաժինը: Թող մի քանի ուսանողներ դասարանի առաջ ներկայացնեն այն փորձը, որ նրանք օգտագործել են այս նախագծի մեջ:

Եթե ուսանողները հապաղում են տալ իրենց պատասխանները, կարդա՛ մեկ կամ երկու օրինակ անցած դասարանների ուսանողներից: Այս ժամանակն օգտագործի՛ր, որպեսզի վերանայես և հստակեցնես, թե ինչպես կարող է ցանկացած իրավիճակ դառնալ հնարավորություն՝ Աստվածաշնչի մեծագույն օրենքին հնազանդվելու համար: Էականն այն է, որ արձագանքենք Աստծո ուզած ձևով, և սերը լինի մեր դրդապատճառը:

5. Դրդապատճառներ և վերաբերմունքներ (1-2 րոպե):

Օգտագործի՛ր առաջին դասաժամի այս ամփոփումն այսօրվա հաջորդ թեմային անցում կատարելու համար: Մատնանշի՛ր, որ քո դրդապատճառները սերտորեն կապված են քո վերաբերմունքի հետ: Այս դասաժամին մենք քննարկելու ենք, թե ինչ տեղ ունի վերաբերմունքն

Աստծուն հնագանդվելու մեջ: Մեր հիմնական նպատակն է՝ իմաստալից ձևեր գտնել Աստծո հանդեպ հնագանդ վերաբերմունքն արտահայտելու համար:

6. Վերաբերմունքի ձևակերպումը (3-5 բառեր):

Համառոտ քննարկե՛ք, թե ինչ են «վերաբերմունքները»: Դու կարող ես անդրադառնալ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի *Վերաբերմունքներ* բաժնի նյութերին: 1-ին գլխում կգտնես բացատրություն, թե ինչ են վերաբերմունքները, ինչպես են դրանք ձևավորվում: Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, թե ինչ են վերաբերմունքները: Ահա սահմանումների մի ցուցակ, որը գտնվում է *Վերաբերմունքներ* բաժնի Ուսանողի ձեռնարկում՝ 1-ին գլխի սկզբում:



Ի՞նչ է վերաբերմունքը

1. Մտածելակերպ
2. Կարծիք
3. Մտածելու պատկեր
4. Մտածելու սովորություն
5. Տեսակետ
6. Մտքեր, որ ես սովորել եմ
7. Մտային դիրք ինչ-որ փաստի կամ իրավիճակի վերաբերյալ

(Webster's Seventh New Collegiate Dictionary)

Եթե քո ուսանողները հստակ պատկերացում ունեն, թե ինչ է վերաբերմունքը, մատնանշի՛ր, թե ինչպես են մեր վերաբերմունքներն ազդում մեր վարքի վրա: Մենք անում ենք՝ ինչ մտածում ենք: Մեր վարքագիծն արտացոլում է մեր վերաբերմունքը: Եթե նրանք ուզում են հնագանդվել Աստծուն, ուրեմն պետք է հնագանդ վերաբերմունք ունենան:

7. Անցկացրո՛ւ Ա. կետը՝ «Մտուզի՛ր այն վերաբերմունքները, որոնք հեշտացնում են Աստծուն չհնազանդվելը» (5-10 բույսեր), Ուսուցման ուղեցույց, 16-18-րդ էջեր:

Քո ուսանողների համար, հնարավոր է, ամենահեշտը լինի զանազանելը, թե որոնք են անհնազանդ վերաբերմունքներն իրենց կյանքում, եթե նրանք ուշադրություն դարձնեն, թե ինչպես են արձագանքում իրենց առաջնորդներին: Եթե նրանք ունեն որոշակի անհնազանդ վերաբերմունք իրենց երկրավոր առաջնորդների հանդեպ, ապա շատ հավանական է, որ նրանք կունենան նույն վերաբերմունքն Աստծո հանդեպ:

Թող նրանք աչքի անցկացնեն անհնազանդ վերաբերմունքների ցուցակը, որը գտնվում է Ուսանողի ձեռնարկի 17-րդ էջում: Քաջալերի՛ր նրանց՝ իրենցից վանելու այն անհնազանդ վերաբերմունքները, որոնք նրանք հեշտությամբ ցուցաբերում են իրենց ամենօրյա կյանքում:

Դու կարող ես համառոտ քննարկել նպարեղենի խանութի դեպքը՝ որպես նրանց օգնելու մի ձև, որպեսզի տեսնեն, թե ինչպես կարող են վերաբերմունքներն աստիճանաբար ազդել անհնազանդության քայլերի վրա: Այս հանգամանքն օգտագործի՛ր, որ նրանք նաև տեսնեն մարդկանց հնազանդվելու և Աստծուն հնազանդվելու միջև եղած կապը:

Քննարկի՛ր Սավուղ թագավորի պատմությունը Ա Թագավորաց 15-րդ գլխից: Երկու առանցքային համարներ (հհ. 22-23) մեջբերված են Ուսանողի ձեռնարկի 18-րդ էջում, սակայն ողջ պատմությունը ներկայացնում է Աստծուն չհնազանդվելու տխուր, բայց ցայտուն մի օրինակ:

Նշի՛ր, թե ինչ տեղի ունեցավ Ա Թագավորաց 13-ում, երբ ավելի ուշ Սավուղը նորից անհնազանդ եղավ Աստծուն:

Աստված Ա Թագավորաց 15:22-23-ում շատ հստակ ասում է, թե ինչ է մտածում անհնազանդ վերաբերմունքի մասին: Հնազանդությունն ավելին է, քան զոհաբերությունը, որ մարդը կարող է անել: Աստված անհնազանդ վերաբերմունքին նայում է որպես կախարհության մեղք: Կամակոր վերաբերմունքը նույնքան լուրջ է, որքան կռապաշտությունը:



8. Անցկացրո՛ւ Բ. կետը՝ «Զարգացրո՛ւ հնագանդ վերաբերմունքներ» (5-10 բույլե) Ուսանողի ձեռնարկ, 18-22-րդ էջեր:

Ներկայացրո՛ւ դասի հաջորդ մասը, որը վերաբերում է հնագանդ վերաբերմունքներին: Օգտագործի՛ր անհնագանդ վերաբերմունքների ցուցակը և քո ուսանողներին հանձնարարի՛ր գտնել դրանցից յուրաքանչյուրի հակառակը կամ հնագանդ վերաբերմունքները: Համառոտ քննարկի՛ր դրանցից յուրաքանչյուրը: Դրանք նկարագրելիս փորձի՛ր պարզ օրինակներ բերել:

Նշի՛ր, որ Հիսուսն Իր կյանքի ընթացքում ցույց է տվել, որ այս վերաբերմունքները գործնական են: Նման հնագանդ վերաբերմունքները շատ ուժեղ էին Իր կյանքում և մեծ ազդեցություն ունեցան Նրա ինքնության ձևավորման վրա: Գեթսեմանի պարտեզում մենք հստակ պատկերացում ենք կազմում, թե ինչպես էր Հիսուսը հնագանդ վերաբերմունքներով արձագանքում: Ընդգծի՛ր, որ հնագանդ վերաբերմունքները հեշտացնում են Աստծուն հնագանդվելը:

Ուսանողի ձեռնարկի 19-22-րդ էջերը լրացուցիչ տեղեկություններ են տալիս հնագանդ վերաբերմունքներից յուրաքանչյուրի համար: Լավ կլիներ մատնանշել, որ Հիսուսն այս հնագանդ վերաբերմունքներից յուրաքանչյուրը Իր առօրյա կյանքի մի մասը դարձրեց:

Արագ ամփոփի՛ր չորս հնագանդ վերաբերմունքներից յուրաքանչյուրը: Համոզվի՛ր, որ նրանք հասկանում են յուրաքանչյուր վերաբերմունքի սահմանումը: Դու կարող ես ուսանողներից մեկին խնդրել՝ օրինակ բերել, թե ինչպես է նա այս չորս վերաբերմունքներն օգտագործել իր առօրյա կյանքում:

Չորս հնագանդ վերաբերմունքներ

1. Հարգալից վերաբերմունք
2. Ծառայի վերաբերմունք
3. Երախտագետ վերաբերմունք
4. Լուռ վերաբերմունք

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկից, 19-22-րդ էջեր

2

9. Աբրահամի հնազանդ վերաբերմունքները (5-7 րուպե):

Աստվածաշնչյան պատմությունը Ծննդոց 22:1-19-ում ներկայացնում է, թե ինչպես Աբրահամի հնազանդ վերաբերմունքը նրան տվեց Աստծուն հնազանդվելու կարողություն, երբ Աստված շատ դժվար հանձնարարություն տվեց նրան: Սա Աբրահամի՝ իր որդի Իսահակին գոհասեղանի վրա գոհաբերելու պատմությունն է:

Քննարկե՛ք, թե նրանց կարծիքով, ինչ հնազանդ վերաբերմունքներ կիրառեց Աբրահամն այս իրավիճակում: Թող նրանք նաև կարդան Եբրայեցիներին 11:17-19-ը՝ ավելի խորը պատկերացում կազմելու այն մասին, թե ինչ մտքեր ունեւր Աբրահամն այս դժվարին ստուգարքի ժամանակ:

10. Հնազանդ վերաբերմունքներ դրսևորել (5-15 րուպե), Ուսանողի ձեռնարկ, 18-22-րդ էջեր:

Ընտրի՛ր առնվազն մեկ հնազանդ վերաբերմունք և մանրամասնորեն քննարկի՛ր, թե ինչպես է այն ազդում քրիստոնյայի կյանքում: Ձեր քննարկումը կենտրոնացրո՛ւ այն բանի վրա, թե ինչպես զարգացնել և դրսևորել այս վերաբերմունքը: Նաև ժամանակ հատկացրո՛ւ քննարկելու համար, թե ինչպես է այս վերաբերմունքն ազդում Աստծո հետ քո փոխհարաբերության վրա: Փորձի՛ր մի քանի տարբեր օրինակներ բերել, թե ինչպես է այս վերաբերմունքն ազդում քո վարքի վրա:

Եթե ժամանակ ունես, հետևի՛ր այս նույն ձևաչափին՝ հնազանդ վերաբերմունքներից յուրաքանչյուրի համար:

Ահա չորս համարներ, որոնք խոսում են հարգանքի մասին: Այս համարները կարող են օգտագործվել հարգալից վերաբերմունքի մասին ձեր քննարկման ժամանակ:

Կողոսացիներին 3:25.

«Եվ ով սխալ է գործում, իր սխալի հատուցումը պիտի ստանա. աչառություն չկա»:

Եփեսացիներին 6:9.

«Եվ դուք, տերե՛ր, նույնն արեք նրանց հանդեպ՝ թողնելով սպառնալիքները: Իմացե՛ք, որ և՛ նրանց, և՛ ձեր Տերը երկնքում է, և Նրա մոտ աչառություն չկա»:

Հոմեացիներին 12:10.

«Իրար հանդեպ գթալի՛ց եղեք եղբայրական սիրով և պատվելիս միմյա՛նց տվեք գերապատվությունը»:

Ա Պետրոս 3:15.

«Միշտ պատրա՛ստ եղեք հեզությամբ ու երկյուղածությամբ պատասխան տալու...»:



Ահա մի քանի մտքեր, թե ինչպես մարդը կարող է հարգալից վերաբերմունք ցույց տալ:

1. Ճիշտ բաներ անել նրանց հանդեպ, ովքեր աշխատում են իմ ենթակայության տակ:
2. Մարդու հանդեպ ավելի կոշտ մի՛ եղիր, քան կլինեիր, եթե այդ անձնավորության փոխարեն Աստված լիներ:
3. Հիշի՛ր, որ Աստված քո տերն է:
4. Հարգանքն ավելի հեշտ է գալիս, երբ սիրում ես տվյալ անձնավորությանը:
5. Հարգանքը պետք է ցույց տալ, ոչ թե միայն մտածել:

11. Ավելի շատ նմանվել Քրիստոսին (3-5 րոպե):

Այս չորս հնագանդ վերաբերմունքների քննարկումն ամփոփելիս ընդգծի՛ր հավասարակշռության կարիքը: Այս հնագանդ վերաբերմունքները զարգացնելով և ձգտելով ազատվել անհնագանդ վերաբերմունքներից՝ մենք ավելի ու ավելի կնմանվենք Քրիստոսին: Մենք ավելի կմոտենանք այս դասի բանալի համարն իրականացնելուն:

Քննարկե՛ք «գիտակցված հնագանդություն» թեման, որ բարձրացված է Ուսանողի ձեռնարկի 22-րդ էջում: Այս հնագանդ վերաբերմունքները նաև վերաբերում են գիտակցական վերաբերմունքին: Իրական հոգևորությունը կույր հնագանդությունը կամ առանց մտածելու հնագանդությունը չէ: Հիսուսը կատարելապես հնագանդ էր Աստծուն և Նրա օրենքներին: Նա *որոշեց* այդպես վարվել: Նրա կյանքը կարելի է բնութագրել որպես գիտակցական հնագանդության կյանք: Նաև մատնանշի՛ր, որ իմաստուն մարդը սիրում է հնագանդվել Աստծուն և Նրա օրենքներին:

12. Անձնական կիրառություն (5 րոպե):

Այսօրվա անձնական կիրառության համար թող ուսանողներն ինքնուրույն գնահատեն իրենց կյանքը:

2

Թող նրանք իրենք իրենց գնահատեն այն վերաբերմունքների առումով, որոնք հեշտացնում են նրանց անհնազանդ լինելը: Օգտագործելով Ուսուցման ուղեցույցի 17-րդ էջի ցուցակը՝ թող նրանք 1-5 սանդղակի վրա գրեն, թե որքան ուժեղ է անհնազանդ վերաբերմունքներից ամեն մեկն իրենց կյանքում: «1»-ը նշանակում է, որ այդ վերաբերմունքը շատ փոքր է և ընդհանրապես խնդիր չէ: «5»-ը նշանակում է, որ այդ վերաբերմունքը շատ ուժեղ է նրանց կյանքում:

Դրանից հետո թող նրանք իրենց գնահատեն հնազանդ վերաբերմունքների առումով՝ օգտագործելով նույն սանդղակը: «1»-ը նշանակում է, որ այդ վերաբերմունքը շատ թույլ է իրենց կյանքում (աճելու շատ կարիք ունի): «5»-ը նշանակում է, որ այդ վերաբերմունքը շատ ուժեղ է նրանց կյանքում:

Թող նրանք գրեն առնվազն մեկ քայլի մասին, որը կարող են անել՝ ավելի ամուր հնազանդ վերաբերմունք զարգացնելու համար: Թող նրանք գրեն նաև այն քայլերի մասին, որոնք կարող են անել՝ իրենց կյանքում եղած անհնազանդ վերաբերմունքից ազատվելու համար:

13. Հանձնարարություններ:

Ա. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի՝ «Աստծուն հնազանդվելու իմ դրդապատճառները» բաժնի համար:

Բ. Դասի վերջում տո՛ւր հարցաշար Մարկոս 12:30-ի վերաբերյալ:

Մարկոս 12:30.

«Եվ սիրի՛ր քո Տեր Աստծուն ամբողջ սրտովդ, ամբողջ անձովդ և ամբողջ մտքովդ և ամբողջ զորությամբդ»:

Գ. Թող քո ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը՝ հաջորդ դասաժամին նախապատրաստվելու համար:

14. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 3.

Ո՞ր օրենքներին ես պետք է հնազանդվեմ

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Աստծուն հնազանդվելն ամենակարևոր բանն է, որ ես կարող եմ անել:

2. Բանալի համար.

Հակոբոս 1:25.

«Իսկ ով ազատության կատարյալ օրենքին է նայում ու հետևում՝ լինելով լսող ու չմոռացող, այլ կատարող, նա այդ անելով՝ երանելի կլինի»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը համընթաց է այս դասին: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ «Ավելի մոտ հայացք Աստծո օրենքներից մեկին» բաժինը նույնպես կօգտագործվի այս դասի հետ:

4. Դասի ջերմացման գործողություն (5 րոպե):

Դասը սկսի՝ ր ստորև բերված հարցերը տալով: Ուսանողներին հնարավորություն տուր, որ հայտնեն իրենց կարծիքները և բացատրեն, թե ինչու են նրանք ընտրել այդ դիրքորոշումը:

- (1) Պե՞տք է, որ քրիստոնյաները հնազանդվեն Նոր Կտակարանի բոլոր օրենքներին:
- (2) Պե՞տք է, որ քրիստոնյաները հնազանդվեն Հին Կտակարանի բոլոր օրենքներին:
- (3) Եթե քրիստոնյաները պետք է հնազանդվեն Աստծո բոլոր օրենքներին, ինչպե՞ս դու կկողմնորոշվես, թե ո՞ր օրենքներին պետք է հնազանդվես, իսկ որ օրենքներն՝ անտեսես:

Այս հարցերը քննարկելիս մեր հիմնական նպատակը չէ՝ յուրաքանչյուր հարցի համար գտնել լավագույն պատասխանը: Դրա փոխարեն մենք պարզապես ուզում ենք նրանց առիթ տալ՝ արտահայտել իրենց կարծիքներն այս հարցերի վերաբերյալ և աստիճանաբար տեսնել այն խնդիրները, որոնք մենք քննարկելու ենք այս դասին: Այս քննարկման ժամանակը

սահմանափակի՛ր, որպեսզի այն չխլի այս դասաժամի մեծ մասը: Մենք այս երեք հարցերին այս դասի ընթացքում կանդրադառնանք ավելի ուշ:

Եթե բոլորը համաձայնվեն, որ մենք պետք է հնագանդվենք Աստծո բոլոր օրենքներին, կարդա՛ նրանց համար Հին Կտակարանի մեկ կամ երկու օրենքներ (տե՛ս Ուսանողի ձեռնարկի 20-րդ էջը) և հարցրո՛ւ նրանց, թե արդյո՞ք նրանք հնագանդվում են այս օրենքներին: Եթե ոչ՝ հարցրո՛ւ, թե ինչո՛ւ:

Ղևտացիս 11:26-27.

«Այն բոլոր անասունների դիակները, որ կճղակավոր են, բայց կճղակը ձեռքված չէ և չեն որոճում, անմաքուր են ձեզ համար. նրանց դիպչողն անմաքուր կլինի: Եվ բոլոր չորքոտանի անասուններից իրենց թաթերի վրա քայլողները բոլորն անմաքուր են ձեզ համար. նրանց դիակներին դիպչողը մինչև երեկո անմաքուր համարվի»:

(Սա ներառում է շատ կենդանիների՝ ի թիվս կատուների, շների և ճագարների):

Ղևտացիներին 20:9.

«Ով իր հորն ու մորն անիծի, անպայման կմեռնի. նա իր հորը կամ մո՛րն է անիծել. նրա արյունն իր վրա թող լինի»:

Հարցրո՛ւ նրանց, թե արդյո՞ք նրանք հիմա ողջ կլինեին, եթե Ղևտացիներին 20:9-ի օրենքը կիրառվեր նրանց հանդեպ՝ սկսած մանկությունից:

Ղևտացիներին 20:10.

«Եվ ով որ մեկ ուրիշ մարդու կնոջ հետ շնություն անի, իր դրացու կնոջ հետ շնություն անողն անպայման կմեռնի, ինչպես շնացողը, այնպես էլ շնացող կինը»:

Ղևտացիներին 1:27.

«Ձեր գլխի մազերի եզրերը կլոր չկտրե՛ք և մորուքի եզրը չապականե՛ք»:

Բ Օրինաց 23:12-13.

«Նաև բանակից դուրս մի տեղ ունենաս, որ այնտեղ պետքի համար դուրս գնաս: Եվ քո զենքերի հետ մի բահ էլ ունենաս, որ երբ դուրսը պետք ունենալու համար նստելու լինես, դրանով փորես և դարձյալ քո կեղտը ծածկես»:

5. Քննարկի՛ր Ա. կետը՝ «Աստծո օրենքների դասակարգումները» (5-15 բույսեր), Ուսանողի ձեռնարկ, 24-25-րդ էջեր:

Բացատրի՛ր դասարանին, որ Աստվածաշունչը տարբեր տեսակի օրենքներ է պարունակում: Աստծո օրենքները կարելի է բաժանել առնվազն հետևյալ չորս դասակարգերի: (Եթե քեզ թվում է, որ կան այլ կարևոր դասակարգումներ, ապա ավելացրո՛ւ դրանք նույնպես):

- 1) Առողջական օրենքներ
- 2) Քաղաքացիական, կառավարական օրենքներ Իսրայելի ժողովրդի համար
- 3) Կրոնական օրենքներ
- 4) Բարոյական օրենքներ

Լավ կլինի, եթե շեշտես Ուսանողի ձեռնարկի 24-րդ էջի հետևյալ կետը:

Օրենքների այս չորս խմբերը համեմատաբար պարզ են թվում, սակայն, իրականում, որոշ օրենքներ հեշտությամբ կարող են համընկնել միանգամից երկու դասակարգումների հետ: Վերջին խումբը՝ բարոյական օրենքները, նույնպես խնդիր է: Իրականում Աստվածաշնչի ցանկացած օրենք կապված է բարոյականության հետ: Այս չորս դասակարգումներն արված են մարդկանց կողմից: Դու Աստվածաշնչում մեկ համար նույնիսկ չես գտնի, որը կբաժաներ օրենքներն ըստ այս չորս դասակարգումների:

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկի 24-րդ էջից

Բացատրի՛ր, որ այս օրենքների յուրաքանչյուր դասակարգում արված է՝ Աստծո ժողովրդի համար օգտակար լինելու նպատակով: Մի քանի օրենքների օրինակնե՛ր բեր, որոնք համընկնում են միանգամից երկու դասակարգումների հետ:

1. Առողջական օրենքներ:

Հին Կտակարանի Ելից, Ղևտացիս, Թվոց և Բ Օրինաց գրքերը լի են տարբեր օրենքներով, որոնք ուղղակիորեն վերաբերում են առողջության պահպանմանը: Բ Օրինաց 23:12-13-ը, որ մեջբերված է վերևում, դրանցից մի օրինակ է: Այս օրենքներից շատերը նաև մանրակրկիտ ցուցումներ են առ այն, թե ինչպես վերաբերվել տարբեր տեսակի հիվանդությունների դեպքում:

Բժիշկ Ս. Ի. Մաք Միլլենը մի հրաշալի գիրք է գրել. «None Of These Diseases» (Flemming H. Revell Publ. Co.): Նա բացատրում է Հին Կտակարանի օրենքների բժշկական ճշգրտությունը: Դու կարող ես կարդալ այդ գիրքը և տեսնել, թե ինչքանով են այս օրենքներն այսօր բժշկական տեսակետից ճիշտ:

2. Քաղաքացիական, կառավարական օրենքներ Իսրայելի ժողովրդի համար:

Ելից գրքից մինչև Բ Օրինաց գիրքը կան շատ օրենքներ, որ տրվեցին հրեաներին՝ Իսրայել ժողովրդի համար սահմանադրություն հաստատելու նպատակով: Հավանաբար մեկից մինչև երեք միլիոն հրեաներ դուրս եկան Եգիպտոսից Մովսեսի առաջնորդությամբ: Նախկին ստրուկների այս զանգվածը պետք է կառավարություն ձևավորեր՝ նոր ազգությունը միավորելու և առաջնորդություն ու ծառայություններ ապահովելու համար: Այս օրենքներից շատերն այն մասին էին, թե ինչպես լուծել վեճերը, հողի վաճառքն ու վարձակալությունը, որբերի խնամքը և այլն:

3. Կրոնական օրենքներ:

Հին Կտակարանի օրենքներից շատերը վերաբերում էին հրեաների կրոնական պրակտիկային: Օրենքների մի մասն էլ վերաբերում էին քահանաների և ղևտացիների գործունեությանն ու պարտականություններին, տարբեր տեսակի կենդանիներին ու զոհաբերություններին, կրոնական տոներին և այլն:

4. Բարոյական օրենքներ:

Աստծո բարոյական օրենքները, որոնք վերաբերում են մարդկային փոխհարաբերություններին հաճախ բնութագրվում են որպես ժամանակից դուրս գտնվող օրենքներ: Տասը Պատվիրանները (Ելից 20:1-17) և Աստվածաշնչի մեծագույն օրենքները (Ղուկաս 10:27) Աստծո բարոյական օրենքների օրինակներ են: Աստծո բարոյական օրենքներին կարող է հնազանդվել ցանկացած մարդ ցանկացած մշակույթում, ազգությունում և ժամանակաշրջանում՝ անկախ իր տնտեսական կամ կրթական մակարդակից: Բանալի համարը կապի՛ր դասի այս հատվածի հետ:

Այստեղ նորից շեշտի՛ր, որ աստվածաշնչյան ցանկացած օրենք իր մեջ բարոյական մաս ունի: Նշի՛ր, որ մնացած երեք դասակարգումների յուրաքանչյուր օրենքի մեջ ևս կա բարոյական մաս: Բայց և այնպես, մենք այս դասակարգումն անվանել ենք «բարոյական օրենքներ»՝ փորձելով տարբերություն դնել օրենքների մեծ խմբերի միջև:



6. **Ո՞ր օրենքներին հնազանդվել (3-5 րոպե):**

Հիմա նորից բարձրացրո՛ւ նույն հարցը. **Նոր Կտակարանի և Հին Կտակարանի ո՞ր օրենքներին պետք է քրիստոնյաները հնազանդվեն:** Իրավական տեսակետից՝ քրիստոնյաներն այլևս կապված չեն Հին Կտակարանի ոչ մի օրենքի հետ: Քաղաքացիական օրենքները, որոնք կարգավորում էին Իսրայելի ժողովրդի կառավարական կառուցվածքը, այսօր այլևս չեն վերաբերում քրիստոնյաներին: Հրեաների կրոնական գործունեությունը կարգավորող օրենքները նախատեսված էին խելամիտ ճանապարհ ապահովելու, այսինքն՝ Աստծո հետ հաղորդակցվելու համար: Հիսուսն եկավ՝ կատարելու Հին Կտակարանի այս օրենքները, և պաշտամունքի նոր ձև բերեց (տե՛ս Մատթեոս 5:17-20):

Եբրայեցիների գիրքը նաև մանրամասն բացատրություն է տալիս, թե ինչու Հին Կտակարանի օրենքները, որոնք վերաբերում են զոհաբերություններին և դրա հետ կապված ողջ կրոնական գործունեությանը, այլևս պետք չեն:

Առողջապահական օրենքներն իրականում Իսրայելի ժողովրդի օրենքների մասն էին կազմում՝ շատ նման այսօրվա կառավարական օրենքներին, որոնք վերաբերում են առողջապահական գործունեությանը: Թեև մենք հարկադրված չենք հնազանդվելու Հին Կտակարանի առողջապահական այս օրենքներին, այնուամենայնիվ, դրանցից շատերը շարունակում են գերազանց ուղեցույց հանդիսանալ առողջապահության բնագավառում: Ս. Ի. Մաք Միլլենն իր՝ «None of These Diseases» գրքում շատ օրինակներ է մատնանշում:

7. **Անցկացրո՛ւ Բ. կետը. «Վիճաբանություն, թե ո՞ր օրենքներին է այսօր պետք հնազանդվել» (5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 25-28-րդ էջեր:**

Աստծո օրենքների 4 դասակարգումների վերանայումը մեզ նախապատրաստում է հաջորդ թեմայի համար, որը մենք ներկայացրինք «Դասի ջերմացման գործողություն» մասում: Այս թեման՝ «Վիճաբանություն, թե ո՞ր օրենքներին է այսօր պետք հնազանդվել», այստեղ վերանայելիս դու պետք է որոշես, թե ինչքան ժամանակ ես սրան հատկացնելու՝ հիմնվելով այն ամենի վրա, ինչ արդեն խոսվել էր դասի սկզբում:

Ուշադի՛ր եղիր, որ քո ժամանակն այստեղ ճիշտ տնօրինես: Այսօրվա հիմնական նպատակը քո ողջ դասաժամն այս թեմայի քննարկման վրա ծախսելը չէ: Այս վիճաբանությունն ընդամենը հիմք է ամենակարևոր հարցի համար, այն է՝ ինչպե՞ս զանազանել և հնազանդվել աստվածաշնչյան

յուրաքանչյուր օրենքի հետևում գտնվող՝ Աստծուց տրված սկզբունքներին: Տե՛ս այսօրվա դասի ծրագրի 11-րդ կետը:

Մենք չենք փորձում հակասություն առաջացնել, բայց մեր ուսանողները պետք է գիտակցեն, որ ն՛ք քրիստոնյաները, ն՛ ոչ քրիստոնյաները տարբեր կարծիքներ ունեն այս հարցի շուրջ՝ թե որ օրենքներին է պետք հնազանդվել այսօր: Այս հարցը նաև բաժանման պատճառ է որոշ քրիստոնեական հարանվանությունների համար:

Մեր նպատակն այսօր այն չէ, որ ապացուցենք, թե ով է ճիշտ և ով՝ սխալ: Մենք պարզապես ուզում ենք նրանց տեղեկացնել, որ սա մի հակասական հարց է, և ուզում ենք օգնել նրանց, որ տեսնեն, թե ինչպես կարող են ճիշտ որոշումներ կայացնել իրենց կյանքի այս ասպարեզում:

Թող քո ուսանողները աչքի անցկացնեն Ուսանողի ձեռնարկի 25-26-րդ էջը, երբ դու մատնանշելու լինես, որ այս հակասությունը նոր հարց չէ. անգամ Ադամն ու Եվան հանդիպեցին այս խնդրին Եդեմի պարտեզում:

Այս պատմության մեջ սատանան խաբեց Եվային՝ հավատացնելով, որ Աստծո օրենքներին չհնազանդվելը նորմալ է: Մենք պետք է գիտակցենք, որ սատանան իր ուժերը ներածին չափով ամեն բան կանի, որպեսզի խաբի մեզ այնպես, ինչպես խաբեց Եվային:

Բայց և այնպես, մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի այնպիսի վերաբերմունք չունենանք, որ նրանք, ովքեր համաձայն չեն մեր տեսակետի հետ, ինչ-որ չափով խաբված են սատանայի կողմից:

Փոխանցի՛ր քո ուսանողներին, որ մենք հակիրճ կերպով կանդրադառնանք այս տարբեր կարծիքներին և կտեսնենք, թե ինչ են դրանք մեզ փոխանցում Աստծուն հնազանդվելու վերաբերյալ:

8. Քննարկի՛ր 1-ին կետը՝ «Քրիստոնյաներն այսօր պետք է հնազանդվեն Հին Կտակարանի բոլոր օրենքներին» (3-5 բույս), Ուսանողի ձեռնարկ, 26-27-րդ էջեր:

Ընդգծի՛ր, որ քրիստոնյաների մեծ մասը չի աջակցում այս կարծիքին: Եվ Մատթեոս 5:17-19 հատվածը կարող է շատ շփոթեցուցիչ լինել նորադարձ քրիստոնյայի համար:

Քո ուսանողների հետ քննարկի՛ր Գործք 15:24-25-ում գտնվող օրինակը, որտեղ Նոր Կտակարանի առաջնորդներն իրենց վերաբերմունքը ցույց տվեցին Հին Կտակարանի օրենքների հարցում:

Նաև հղո՛ւմ արա Ուսանողի ձեռնարկում գտնվող այս դիրքորոշման վերջին պարագրաֆին, որտեղ Հին Կտակարանի օրենքների հանդեպ այս դիրքորոշման մի տարբերակ կա: Մատնանշի՛ր այս դիրքորոշման հետ կապված թյուրիմացությունները, հիմա ցանկացած մարդ պետք է կողմնորոշվի, թե որ օրենքներին է նա պատրաստվում հնազանդվել, իսկ որոնք՝ անտեսել: Ի՞նչ չափանիշներ են մարդիկ պատրաստվում կիրառել, և ո՞վ պետք է ասի՝ դա ճի՞շտ է, թե՞ ոչ:

3

Այս դիրքորոշման մի տարբերակն էլ այն է, որ քրիստոնյաները պետք է հնազանդվեն Հին Կտակարանի ոչ թե բոլոր օրենքներին, այլ դրանցից որոշներին: Սա մեզ դնում է մի դժվարին իրավիճակի մեջ, որտեղ ստիպված ենք որոշել, թե որ օրենքներին պետք է հնազանդվել, իսկ որոնք՝ անտեսել:

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկի 27-րդ էջից:

9. Քննարկի՛ր 2-րդ դիրքորոշումը՝ «Քրիստոնյաները պետք է հնազանդվեն Նոր Կտակարանի օրենքներին» (3-5 բույսեր), Ուսանողի ձեռնարկ, 27-րդ էջ:

Որոշ մարդիկ հավատում են, որ Հին Կտակարանի օրենքները մեզ այսօր ընդհանրապես չպետք է անհանգստացնեն: Նրանք սա հիմնավորում են այն դիրքորոշմամբ, որ Հիսուսը, 2000 տարի առաջ գալով, Նոր Ուխտ հաստատեց, և, այսպիսով, Հին Կտակարանի հին ուխտը՝ ներառյալ այդ հին ուխտի օրենքները, այսօր մեզ այլևս չեն վերաբերում:

Այս մարդկանց որոշ մասը շատ քիչ արժեք է տեսնում Հին Կտակարանի մեջ, բացառությամբ ընդամենն այն, որ նրանում հետաքրքիր պատմություններ կան: Այս կարծիքը շատ է տարբերվում բազմաթիվ այլ մարդկանց կարծիքներից, ովքեր մեծ արժեք են տալիս Աստվածաշնչի բոլոր 66 գրքերին:

10. Քննարկի՛ր 3-րդ դիրքորոշումը՝ «Մկզբնակետ՝ նորադարձ քրիստոնյաների համար» (2-3 բույսեր), Ուսանողի ձեռնարկ, 28-րդ էջ:

Հղո՛ւմ արա Ուսանողի ձեռնարկի 28-րդ էջին՝ այս դիրքորոշման վերաբերյալ ավելի շատ տեղեկություն ստանալու համար: Մենք պետք է ծայրահեղ ուշադիր լինենք, որպեսզի այս դասը չվերածվի իրավական քննարկման: Մեր իրական նպատակն է սովորել՝ ինչպես հնազանդվել Աստծուն, այլ ոչ թե՝ ինչպես շրջանցել Աստծո օրենքներին հնազանդվելը:

Նորադարձ քրիստոնյաների համար այս հարցում ելակետ կարող է լինել հետևյալը՝ «Ես ուզում եմ անձնական փոխհարաբերություն ունենալ Հիսուսի հետ: Ես ուզում եմ Նրան ցույց տալ, որ սիրում եմ Իրեն»: Աստծուն հնագանդվելը լավագույն ձևերից մեկն է՝ ցույց տալու, որ սիրում ենք Նրան:

Ելակետը սերն է, ոչ թե իրավական քննարկումներն օրենքների շուրջ:

Օգտագործի՛ր այս համառոտ ներածությունը՝ դասի հաջորդ բաժին տեղափոխվելու համար, որն այսօրվա դասի ամենակարևոր մասն է: Մենք պետք է հնագանդվենք Աստծո օրենքների հետևում եղած սկզբունքներին: Մա մի ուղեցույց է, որը կիրառելի է Աստծո բոլոր օրենքների համար:

11. Քննարկի՛ր Գ. կետը՝ «Հնագանդվի՛ր Աստծո օրենքների հետևում եղած սկզբունքներին» (10-20 բույե), Ուսանողի ձեռնարկ, 28-30-րդ էջեր:

Օգտագործի՛ր քննարկումը՝ թե որ օրենքներին պետք է քրիստոնյան հնագանդվի (այս դասի ծրագրի 6-10-րդ կետեր)՝ դասի հաջորդ բաժինը ներկայացնելու համար: Մենք կարիք ունենք հնագանդվելու Աստծո օրենքների հետևում եղած սկզբունքներին: Մա ուղեցույց է, որը վերաբերում է Աստծո բոլոր օրենքներին:

Աստծո յուրաքանչյուր օրենք հիմնված է կյանքի սկզբունքի վրա: Մենք նաև կարող ենք ասել, որ Աստծո յուրաքանչյուր օրենք հիմնված է բարոյական սկզբունքի վրա:

Աստծո յուրաքանչյուր օրենքի հետևում կա պատճառ, որը համընկնում է սուրբ ապրելակերպի վերաբերյալ Աստծո ծրագրի հետ: Մենք պետք է սովորենք, թե ինչպես զանազանել այն սկզբունքները, որոնք յուրաքանչյուր օրենքի հիմքն են կազմում, և պետք է սովորենք կիրառել այդ սկզբունքներն այսօր մեզ հանդիպած ընթացիկ իրավիճակներում: Այս ձևով մենք կիմանանք, թե ինչպես արձագանքել այնպիսի իրավիճակների դեպքում, ինչպիսիք են՝ ծխելը, թմրանյութ ընդունելը, թույլատրված արագությունը գերազանցելը և այլն:

Հիմա ժամանակ հատկացրու՝ քննարկելու համար աստվածաշնչյան տարբեր օրենքներ թե՛ Հին Կտակարանից, թե՛ Նոր Կտակարանից: Դու կարող ես դասարանը բաժանել փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբի հանձնարարել՝ ուշադիր ուսումնասիրել մեկական օրենք: Իրենց հանձնարարությունն ավարտելուց հետո թող նրանք ամբողջ դասարանի հետ կիսվեն՝ ինչ որ հայտնաբերել են:

Աստվածաշնչի յուրաքանչյուր օրենքի հետ կապված՝ խոսե՛ք հետևյալ երեք մեթոդների մասին.

1. Առաջինը նայե՛ք, թե ի՞նչ է իրականում ասում տվյալ օրենքը:
2. Այնուհետև քննարկե՛ք, թե ինչ սկզբունք(ներ) է դրված այդ օրենքի հիմքում: Ի՞նչ է մեզ ասում այդ սկզբունքն Աստծո և Նրա արժեհամակարգի մասին:
3. Ինչպե՞ս կարող է այդ սկզբունքը կիրառվել իմ առօրյա կյանքում, որպեսզի օգնի ինձ՝ հաղթահարելու այն խնդիրներն ու դժվարությունները, որոնց ես ամեն օր հանդիպում եմ:

3

Օրինակ 1. Բ Օրինաց 23:12-13. Ձուգարանն օգտագործելու վերաբերյալ:

Բ Օրինաց 23:12-13.

«Նաև բանակից դուրս մի տեղ ունենաս, որ այնտեղ պետքի համար դուրս գնաս: Եվ քո զենքերի հետ մի բահ էլ ունենաս, որ երբ դուրսը պետք ունենալու համար նստելու լինես, դրանով փորես և դարձյալ քո կեղտը ծածկես»:

1. **Ի՞նչ է ասում օրենքը.** Տուցում է տալիս, թե ինչպես ճիշտ օգտագործել «դրսի զուգարանը»:
2. **Օրենքի հետևում եղած սկզբունքը.** կարևոր է բնակավայրը մաքուր պահել աղտերից:

Նույնիսկ այսօր աշխարհի որոշ հատվածներում տարրական սանիտարական ցուցումներն անտեսվում են՝ բերելով աղետալի հետևանքներ: Համաճարակներ են տարածվում, երբ մարդկային աղբը ընկնում է խմելու ջրի կամ սնունդի մատակարարման մեջ: Հին Կտակարանի այս օրենքի հետևում եղած սկզբունքն այն է, որ մարդկանց հեռու պահի աղտոտվածությունից և վարակակիր նյութերը հեռացնելու վերաբերյալ արդյունավետ միջոցների խորհուրդ տա: Նաև մարդկային արտաթորանքը թաղելու պարագայում բնությունը քայքայում է այն և վերածում պարարտանյութի բույսերի համար, ոչնչացնում է վարակակիր միկրոբներին:

3. Օգտագործել այդ սկզբունքն այսօր իմ կյանքում:

- Ա) Ես ստամոքսս դատարկելուց հետո պետք է իրականացնեմ պատշաճ ուշադրություն և սանիտարական մաքրություն:
- Բ) Ես զուգարանից օգտվելուց հետո պետք է լվանամ ձեռքերս:
- Գ) Ես պետք է մաքրեմ իմ շան աղբը, հատկապես եթե ապրում եմ քաղաքում: Նրանց արտաթորանքը նույնպես կարող է հիվանդությունների հարուցիչների տարածման միջոց լինել:

Այս սկզբունքը կարող է նաև կիրառվել՝ արդարացնելու համար քաղաքում կեղտաջրերի մաքրման հարմարանքների տեղադրումը: Դրանց նպատակն է՝ մաքրել և հեռացնել աղբն ու հիվանդության հարուցիչները՝ նախքան դրանք կլցվեն գետերի մեջ:

Այն նաև արդարացնում է քաղաքում խմելու ջրի մաքրման համակարգի տեղադրումը, որի նպատակն է՝ մաքրել խմելու ջուրը, որպեսզի մարդիկ մինչև խմելը վստահ լինեն, որ այն մաքուր է:

Օրինակ 2. Մատթեոս 5:21-22. Մարդասպանություն՝ համեմատած բարկության:

Մատթեոս 5:21-22.

«Լսել եք, որ նախնիներին ասվեց. «Մի՛ սպանիր, որովհետև ով սպանություն անի, պիտի դատապարտվի»: Բայց ես ասում եմ ձեզ, եթե մեկն առանց պատճառի բարկանա իր եղբոր վրա, դատաստանի ենթակա կլինի: Եվ ով իր եղբորը Ռաքա ասի, ատյանին ենթակա կլինի: Իսկ ով իր եղբորը «հիմար» ասի, գեհենի կրակին ենթակա կլինի»:

Այս օրինակում, Հիսուսը ցույց է տալիս Հին Կտակարանի օրենքի հետևում եղած Աստծո սկզբունքը: Լեռան քարոզը կարդալիս կտեսնես, որ Հիսուսը մի քանի օրինակներ է բերում առ այն, թե ինչպես էին Իր օրերի մարդիկ բաց թողնում սկզբունքը և չէին կարողանում պատշաճ կերպով կիրառել այն իրենց կյանքում:

- 1. **Ի՞նչ է ասում օրենքը.** Մի՛ սպանիր:
- 2. **Օրենքի հետևում եղած սկզբունքը.** Հարգի՛ր մարդկային կյանքը: Հարգի՛ր մյուս մարդկանց:
- 3. **Կիրառել այդ սկզբունքն այսօր իմ կյանքում.** Մի՛ բարկացիր եղբորդ վրա:

3

Եթե դու բավականաչափ ժամանակ ունես, ապա կարող ես քննարկել Աստծո օրենքների մի քանի օրինակներ և քո դասն անցկացնել այս երեք քայլերից բաղկացած հարցերով, որպեսզի նրանք կողմնորոշվեն, թե ինչպես կարող են այդ սկզբունքներն այսօր կիրառվել իրենց կյանքում: Դու կարող ես դիտարկել նաև մի քանի արդիական խնդիրներ, օրինակ՝ մեքենա վարելիս արագության գերազանցումը, խնդիրներ, որոնք հատուկ կերպով նշված չեն Աստվածաշնչում: Կարող ես գտնել մի օրենք, որի սկզբունքը ուղղակիորեն վերաբերում է այս խնդրին: Արագության գերազանցման հետ կապված՝ Հռոմեացիներին 13:1-2-ը հրաշալի օրինակ է. տե՛ս Ուսանողի ձեռնարկի 30-րդ էջը:

Օրինակ 3. Ա Կորնթացիներին 9:9 և Ա Տիմոթեոս 5:17-18. կերակրել քո կենդանիներին և հոգ տանել քո ծառաների համար:

Ա Տիմոթեոս 5:17-18.

«Լավ դեկավարող երեցները թող կրկնակի պատվի արժանի համարվեն, հատկապես նրանք, ովքեր ծառայում են խոսքով ու վարդապետությամբ: Որովհետև Գիրքն ասում է. «Կալ անող եզան դունչը մի՛ կապիր»:[1] «Մշակն արժանի է իր վարձին»:[2]

Տե՛ս 1. Երկրորդ օրինաց 25:4, 2. Ղուկաս 10:7:

Նոր Կտակարանում Պողոսն օգտագործում է Հին Կտակարանի օրենքը, որը եզան հետ ճիշտ վերաբերվելու մասին է: Կիրառելով այս օրենքի սկզբունքը՝ բացատրում է, թե ինչու պետք է եկեղեցիները վարձատրեն իրենց հովիվներին: Նա մեջբերում է անում Բ Օրինաց 25:4-ը երկու անգամ (Ա Կորնթացիներին 9:9 և Ա Տիմոթեոս 5:18): Տե՛ս դրանց հարակից համարները՝ իմանալու համար, թե ինչ բացատրություն է տալիս Պողոսը Հին Կտակարանի այս օրենքն օգտագործելու վերաբերյալ:

Նշված օրինակներից յուրաքանչյուրի քննարկման ընթացքում քո ուսանողներին բեր այն մտքին, որ այս ամենը չի վերաբերում իրավական օրենքներին հնազանդվելուն: Սա վերաբերում է մեր կողմից Աստծո սկզբունքները հայտնաբերելուն, նպատակը՝ որպեսզի հաջողակ կյանք վարենք: Երբ ես հասկանում եմ Աստծո սկզբունքները, որոշում եմ իմ կյանքում հնազանդվել դրանց, որոշում եմ դրանք կիրառել ամեն օր, քանի որ ուզո՞ւմ եմ: Սա իմ սիրո դրսևորումն է Աստծո հանդեպ:

Այսօրվա դասի ամբողջ բաժնին անդրադառնալու համար մեկ այլ միջոց է տեսնելը, որ սա Աստվածաշնչի մեծագույն օրենքին հնազանդվելու ձևերից մեկն է: Ինչպե՞ս եմ ես ցույց տալիս Աստծուն, որ սիրում եմ Իրեն:

Հայտնաբերելով Աստվածաշնչի յուրաքանչյուր օրենքի հետևում եղած սկզբունքը՝ պետք է աշխատեն գործի դնել այդ սկզբունքներն իմ կյանքի առօրյայում. սա իրո՛ք հզոր միջոց է ցույց տալու Աստծուն, որ ես սիրում եմ Նրան:

12. Օրենքի հոգին՝ համեմատած օրենքի տառի հետ (5 րոպե):

Օրենքի սկզբունքին հնազանդվելը սերտորեն կապված է Աստվածաշնչում քննարկված մեկ այլ հարցի հետ: Մի քանի տեղերում մենք կարդում ենք, որ պետք է հնազանդվենք օրենքի հոգուն, այլ ոչ թե ընդամենը օրենքի տառին: Գիտակցական հնազանդություն նշանակում է, որ մենք պետք է ավելի ուշադիր դիտարկենք այն օրենքները, որ Աստված տվել է մեզ, որպեսզի հասկանանք, թե ինչու է Նա այդ օրենքներից ամեն մեկը ստեղծել:

Հիսուսը խստորեն հանդիմանում էր փարիսեցիներին՝ Հին Կտակարանի օրենքներն իրավական տեսակետից մեկնաբանելու համար, երբ նրանք, մինևույն ժամանակ, անտեսում էին Աստծո սկզբունքները, որոնք հիմք էին հանդիսանում այդ բոլոր օրենքների համար: Մատթեոս 23:23-ում Հիսուսը մի շարք օրենքների թվում նաև ասում է նրանց, որ հնազանդվեն տասանորդի վերաբերյալ օրենքին, միաժամանակ նաև հնազանդվեն այդ օրենքների հետևում գտնվող սկզբունքներին:

Լեռան քարոզում Հիսուսը նմանատիպ մի բան արեց՝ մեջբերում անելով Հին Կտակարանի օրենքներից կամ հրեական ավանդույթներից, իսկ հետո ընդգծեց, որ այդ օրենքի հետևում գտնվող սկզբունքը շատ ավելի խիստ կամ սուրբ ապրելակերպ է ներառում: Տե՛ս Մատթեոս 5:21-48:

13. Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4. «Ավելի մոտ հայացք Աստծո օրենքներից մեկին» (10-15 րոպե):

Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ *«Ավելի մոտ հայացք Աստծո օրենքներից մեկին»* բաժինը կարող է օգտագործվել դասի այս հատվածում: Թող մի քանի ուսանողներ կիսվեն, թե ինչ փորձառություն են իրենք ունեցել այս նախագիծը լրացնելիս: Դու կարող ես այս նախագիծն օգտագործել 4-րդ դասի հետ, երբ մենք կքննարկենք Աստծո օրենքներին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները: Տե՛ս ուսուցչի դասի ծրագրի 10-րդ կետը՝ չորրորդ դասի համար:



14. Անցկացրո՛ւ Դ. կետը՝ «Ի՞նչ է «Աստծո կամքը»: (Այլընտրանքային կամ 10-15 րոպե, կամ մի ամբողջ դասաժամ), Ուսանողի ձեռնարկ, 31-32-րդ էջեր:

Աստծո կամքը կատարելն Աստվածաշնչի մեծագույն օրենքին հնազանդվելու մեկ այլ ձև է: Աստծո կամքի թեման շատ ընդարձակ է և հաճախ բարդ թեմա է քրիստոնյայի կյանքում: Դու կարող ես այդ մասին համառոտ անցնել այսօր, կամ էլ առանձին դասաժամ հատկացնել և ավելի խորությամբ ուսուցանել այն:

3

Ուսանողի ձեռնարկի 31-32-րդ էջերում ներկայացվում են ութ խոշոր թեմաներ, որոնք Աստծո կամքն են հանդիսանում ցանկացած անձնավորության համար: Աստծո կամքի ուսումնասիրությունը համընկնում է Աստծուն հնազանդվելու այս դասընթացի հետ, քանի որ սա քրիստոնեական կյանքի այն ասպարեզն է, որտեղ հնազանդություն է պահանջվում:

Վստահ կարող ենք ասել, որ Աստծո կամքի 95%-ը յուրաքանչյուր քրիստոնյայի համար գրված է Աստվածաշնչում (տե՛ս Ուսանողի ձեռնարկի 31-32 էջերը օրինակների համար): Երբեմն քրիստոնյաներն Աստծո կամքն ավելի են բարդացնում, քան այն իրականում կա: Եթե մենք անեինք՝ ինչ Աստվածաշունչն է մեզ ասում, որ անենք, մարդկանց մեծամասնությունը ժամանակ չէր ունենա՝ անհանգստանալու այն բանի վերաբերյալ, թե ո՞րն է Աստծո կամքի մնացած 5%-ը մեր կյանքի համար:

Բացատրի՛ր, որ Աստված Իր ծրագրերը միշտ հայտնում է յուրաքանչյուր քրիստոնյայի, երբ Ինքն է կամենում, այլ ոչ թե այն ժամանակ, երբ մենք ենք խնդրում Նրանից: Նա, հիմնականում, քեզ չի ասի, թե ինչ է ցանկանում անել տասը տարի հետո: Քաջալերի՛ր նրանց, որ նախապես ծրագրեն, սակայն ճկուն վերաբերմունք ունենան՝ հասկանալով, որ Աստված իրավունք ունի փոխելու նրանց ծրագրերը, եթե այդպես որոշի: Տե՛ս Հակոբոս 4:13-16:

15. Անձնական համոզմունքներ և անձնական հետաքրքրություններ (5-10 րոպե) Ուսանողի ձեռնարկ, 32-33-րդ էջեր:

Աստծո կամքը քննարկելու ժամանակ դու կարող ես նաև անցկացնել անձնական համոզմունքների թեման: Սուրբ Հոգին շատ անգամ խոսում է մարդկանց հետ այն որոշակի բաների մասին, որոնք Նա չի ուզում, որ մարդիկ անեն: Օրինակ, որոշ մարդիկ անձնական համոզմունք ունեն գինի խմելու, կինո գնալու, շորի որոշ տեսակների, կամ իրենց գումարը ծախսելու վերաբերյալ: Այս անձնական համոզմունքները տվյալ անձնավորության համար Աստծո կամքի կարևոր մասն են կազմում:

Անձնական համոզմունքները նկարագրելու մեկ այլ ձև է՝ տեսնել դրանք որպես «անձնական սահմաններ», որոնք Աստված տվել է այդ անձնավորությանը: Բայց և այնպես, համոզվի՛ր, որ պարզաբանել ես Ուսանողի ձեռնարկում նշված կետը, այն է՝ Աստված մեզ երբեք չի տա այնպիսի անձնական համոզմունքներ, որոնք մեզ կդրդեն կատարել Աստծո օրենքներից որևէ մեկով արգելված քայլեր: Աստծուց տրված անձնական համոզմունքներն ավելի խիստ սահմաններ են ապահովում մարդու համար, քան Աստվածաշնչի օրենքները:

Մատնանշի՛ր, որ մեզնից ամեն մեկը պետք է հարգալից վերաբերմունք դրսևորի մյուսների անձնական համոզմունքների հանդեպ: Սակայն, միննույն ժամանակ, մենք պետք է զգույշ լինենք՝ մեր անձնական համոզմունքները մյուսներին չպարտադրելու հարցում: Կարդա՛ Ա Պետրոս 2:16-ը և տե՛ս, թե ինչպես է Աստծո կամքը շաղկապված Աստծո օրենքների հետ:

Նորադարձ քրիստոնյաների համար Աստծուց տրված անձնական համոզմունքների և անձնական հետաքրքրությունների համեմատությունը կարող է ինչ-որ չափով բարդ լինել: Նշի՛ր, որ շատ քրիստոնյաներ՝ թե՛ երիտասարդ, թե՛ ծեր, հստակ բաժանում չեն անում այս երկու ասպարեզների միջև:

Եթե մի մարդ սուրճ չի սիրում, դա Աստծուց տրված անձնական համոզմունք չէ, դա ընդամենը նրա անձնական ճաշակն է, թե ինչ է նախընտրում խմել: Նորմալ է, եթե մեկը սուրճ չի սիրում, սակայն դա, բնականաբար, չի նշանակում, որ Աստված պատասխանատու է այդ անձնական ճաշակի համար:

Մենք պետք է մեր ուսանողներին օգնենք, որպեսզի հասկանան անձնական համոզմունքների շուրջ իրավական վիճաբանությունների մեջ չմտնելու կարևորությունը: Ընդգծի՛ր, որ դրանք ԱՆՁՆԱԿԱՆ համոզմունքներ են:

16. Անձնական կիրառություն (5-10 ույե):

Այսօրվա անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ Աստծո օրենքներին հնազանդվելու վրա: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի զանազանեն Աստծո այն օրենքները, որոնք կապ ունեն իրենց կյանքի որոշակի ասպարեզների հետ, որտեղ նրանք կարիք ունեն աճելու: Երկու մեծագույն օրենքներից մեկով սկսելը կարող է շատ լավ ելակետ լինել սկսելու համար:

Նաև քաջալերի՛ր նրանց, որպեսզի ժամանակ հատկացնեն՝ հայտնաբերելու համար Աստծո օրենքներից յուրաքանչյուրի հետևում եղած սկզբունքը: Եթե նրանք հայտնվեն մի իրավիճակում՝ չիմանալով Աստծո որևէ կոնկրետ օրենք, որը նրանց կասի՝ ինչպես արձագանքել տվյալ պահին, նման դեպքերում նրանք պետք է կողմնորոշվեն, թե Աստծո ո՛ր սկզբունքը նրանց կարող է օգնել որոշելու՝ ինչպես ճիշտ արձագանքել: Հիշեցրո՛ւ նրանց, որ մենք ունենք Սուրբ Հոգին՝ որպես մեր Ուսուցիչ և մեր Ուղեցույց: Մենք պետք է զգայուն լինենք մեր խղճմտանքի հանդեպ, քանի որ Աստված մեզ հետ խոսում է դրա միջոցով:

3

17. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում հարցաշա՛ր տուր Հովհաննես 13:34-35-ի վերաբերյալ:

Հովհաննես 13:34-35.

«Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ դուք միմյանց սիրեք. ինչպես Ես ձեզ սիրեցի, դուք էլ նույնպես իրար սիրեք: Սրանով բոլոր մարդիկ պիտի իմանան, որ դուք Իմ աշակերտներն եք, եթե դուք իրար համար սեր ունենաք»:

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ «Ավելի մոտ հայացք Աստծո օրենքներից մեկին» բաժնի համար, եթե այն օգտագործել էս այս դասի համար:

Գ. Թող քո ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 4-րդ և 5-րդ գլուխները՝ հաջորդ դասաժամին նախապատրաստվելու համար:

18. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 4.

Աստծուն հնազանդվելու և չհնազանդվելու արդյունքները

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես պետք է խորը մտածեմ առօրյա կյանքում Աստծուն հնազանդվելու և չհնազանդվելու արդյունքների մասին:

2. Բանալի համար:

Առակաց 13:13.

«Խոսքն արհամարհողը կորչելու է, բայց պատվիրաններից վախեցողը կվարձատրվի»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 4-րդ և 5-րդ գլուխները համընթաց են այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդի՝ «Աստծուն հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները» և Նախագիծ 4-րդի՝ «Ավելի մոտ հայացք Աստծո օրենքներից մեկին» բաժինը նույնպես կօգտագործվի այս դասին:

4. Դասի ջերմացման գործողություն (5-10 րոպե):

Ընտրի՛ր հետևյալ գործողություններից որևէ մեկն այս դասը սկսելու համար:

Ա. Եթե ես լինեի Աստծո փոխարեն...

Թող ուսանողներից ամեն մեկը գրի իր մտքերը, թե ինչպես կլրացնեն հետևյալ նախադասությունները:

- 1) Եթե ես լինեի Աստծո փոխարեն, այս ձևով կվարձատրեի ինձ հնազանդվող մարդկանց:
- 2) Եթե ես լինեի Աստծո փոխարեն, այս ձևով կպատժեի մեղավորներին (ոչ-քրիստոնյաներին)՝ ինձ չհնազանդվող մարդկանց:
- 3) Եթե ես լինեի Աստծո փոխարեն, այս ձևով կպատժեի այն քրիստոնյաներին, ովքեր չեն հնազանդվում ինձ:

- 4) Եթե ես լինեի Աստծո փոխարեն, այս ձևով կհամոզեի մարդկանց, որ ինձ հնազանդվեն:

Երբ ուսանողները ավարտեն իրենց մտքերը գրել, թող կիսվեն ողջ դասարանի հետ: Մրա հիմնական նպատակն է՝ մեր ուշադրությունը կենտրոնացնել այսօրվա դասաժամի թեմային, այնպես որ այս պահին մենք կարիք չունենք «ճիշտ կամ սխալ» պատասխաններ փնտրել:

Բ. Լինել Աստծո ոստիկան:

Դու կարող ես ընտրել երկու կամ երեք ուսանողների՝ դիտարկվող նյութը բեմականացնելու կամ այդ բեմադրությունը տեսաձայնագրելու համար, որպեսզի հետո դասի սկզբում դա ցուցադրվի ուսանողների առաջ: Թող երկու կամ երեք ուսանողներ ներկայանան որպես Աստծո ոստիկաններ:

4

Նրանք պատասխանատու են՝ հետևելու, որ մարդիկ վարձատրվեն Աստծո օրենքներին հնազանդվելու համար: Նրանք նաև հանձնարարություն ունեն՝ բռնելու այն մարդկանց, ովքեր չեն հնազանդվում Աստծո օրենքներին, և տեղեկացնելու այդ մասին Աստծուն: Նաև պետք է իրականացնեն այն դաստիարակչական միջոցառումները, որոնք Աստված ճիշտ կհամարի տվյալ անձնավորության համար:

Թող այդ ոստիկանները պատմեն, թե ինչ փորձառություն են նրանք ձեռք բերել վերջին շրջանում:

5. Գրի՛ր Աստծուն հնազանդվելու և չհնազանդվելու արդյունքները (10-15 րոպե):

Կազմի՛ր երկու ցուցակ գրատախտակի կամ մեծ ստվարաթղթի վրա: Մի ցուցակը կլինի Աստծուն հնազանդվելու արդյունքների վերաբերյալ, իսկ մյուս ցուցակը՝ Աստծուն չհնազանդվելու արդյունքների վերաբերյալ, որը պետք է գրես մյուս թղթի վրա: Նախընտրելի է սա անել ողջ դասարանի՝ որպես մի մեծ խմբի մասնակցությամբ, իսկ իրենցից մեկը արդյունքները կարող է գրել յուրաքանչյուր ցուցակի մեջ: Կամ էլ կարելի է դասարանը բաժանել փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբի տրամադրել երկու մեծ ստվարաթղթեր ու մարկերներ, որպեսզի առանձին-առանձին կատարեն նույն աշխատանքը:

Քաջալերի՛ր նրանց, որ յուրաքանչյուր արդյունքի կողքին Աստվածաշնչից համար գրեն: Այս ցուցակները կազմելիս նրանք կարող են օգտագործել իրենց՝ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդին տված պատասխանները:

Ցուցակները կազմելուց հետո թող յուրաքանչյուր խումբ դասարանի առաջ ներկայացնի իր հայտնաբերածները: Այդ երկու ցուցակները, հավանաբար, իրար հակասող շատ արդյունքներ կպարունակեն: Ինչքան այսօր շատ քննարկես դա, այնքան ավելի հստակ կլինի բոլորի համար, որ Աստծուն հնազանդվելը խելամիտ է: Եղած արդյունքներն արդեն ապացուցում են, որ Աստծուն հնազանդվելն ավելի լավ է, քան չհնազանդվելը:

Այս քննարկումն ամփոփելուց հետո ընդգծի՛ր, որ հաճախ մենք չենք կարողանում նկատել մեր հնազանդ կամ անհնազանդ քայլերի արդյունքներից շատերը: Եթե դեռ չես արել, ուսանողներին ցո՛ւյց տուր Ուսանողի ձեռնարկի 36-րդ էջում գտնվող մի քանի անձնավորությունների ցուցակը և պատկերավոր ձևով բացատրի՛ր, թե ինչպես են այդ անձնավորություններն ազդեցություն կրել մեր հնազանդ կամ անհնազանդ արարքներից:

6. Ավելի մոտ հայացք Աստծուն հնազանդվելու և չհնազանդվելու աստվածաշնչյան օրինակներին (5-10 րոպե):

Ուսանողի ձեռնարկն ավելի մոտ հայացք է գցում Աստծուն հնազանդվելու՝ Հին Կտակարանի օրինակների վրա. Հովսեփի և Սեդրաքի, Միսաքի և Աբեղնագովի (տե՛ս 36-37-րդ էջերը): Դու կարող ես անդրադառնալ այդ օրինակներից մեկին կամ երկուսին էլ, որպեսզի օգնես քո ուսանողներին՝ տեսնել Աստծուն հնազանդվելու հետևանքները:

Ուսանողի ձեռնարկը նաև ներառում է Աստծուն հնազանդվելու՝ Բրայենի ժամանակակից օրինակը (37-38-րդ էջեր): Այսօրվա դասին մենք կարիք ունենք շեշտելու, որ Աստված հաստատ տեսնում է մեր հնազանդ և անհնազանդ արարքները: Նա Բ Օրինաց 11:26-28-ում խոստացել է մեզ կամ օրհնել կամ պատժել մեր արարքների համար:

Ուսանողի ձեռնարկի 5-րդ գլխում կան աստվածաշնչյան օրինակներ Աստծուն չհնազանդվելու վերաբերյալ. Ադամն ու Եվան Եդեմի պարտեզում, Դավիթ թագավորն ու Բերսաբեն (տե՛ս 41-42-րդ էջերը):

Ուրիշ շատ օրինակներ էլ կան Աստծուն հնազանդվելու և չհնազանդվելու վերաբերյալ, որոնք կարող են այս դասին օգտագործվել: Տե՛ս 38-39-րդ էջը՝ հնազանդության արդյունքների վերաբերյալ համարների համար, և 47-րդ էջը՝ անհնազանդության արդյունքների վերաբերյալ համարների համար:

Ընդգծի՛ր այս հարցը տալու կարևորությունը. «Ի՞նչ կարող եմ ես սովորել ուրիշների հնազանդությունից կամ անհնազանդությունից»: Շատ կարևոր է, որ մենք սովորենք նաև ուրիշների հաջողություններից ու սխալներից, ոչ թե միայն մեր սեփական փորձառությունից:

7. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Անհնազանդության հետ կապված չորս առանցքային բառեր» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 42-47-րդ էջեր:

Ուսանողի ձեռնարկի 42-47-րդ էջերում քննարկվում են չորս առանցքային սահմանումներ, որոնք կապ ունեն անհնազանդության հետ:

- 1) Բնական հետևանքներ:
- 2) Դաստիարակություն:
- 3) Պատիժ:
- 4) Վրեժխնդրություն:

Դու այս դասաժամից առաջ հանձնարարի՛ր քո ուսանողներին, որ նրանք դասարանին կարճ շարադրանք ներկայացնեն վերոնշյալ չորս առանցքային դասակարգումների վերաբերյալ: Նրանք կարող են ներառել աստվածաշնչյան և ներկա ժամանակում տեղի ունեցած օրինակներ, որոնք պարունակում են այս առանցքային սահմանումները:

Առաջին բաժինը՝ բնական հետևանքները, ուղղակիորեն կապ ունի Աստծուն հնազանդվելու և չհնազանդվելու հետ: Մյուս երեք բաժիններն առավելապես վերաբերում են հենց անհնազանդությանը:

«Պատիժ» բառը քննարկելիս դու պետք է համառոտ բացատրես, որ մեր դասաժամին մենք այսօր օգտագործում ենք պատժի նեղ սահմանում և այն առանձնացնում ենք դաստիարակությունից: Մակայն և՛ աստվածաշնչյան, և՛ մեր ժամանակներում պատիժ բառը հաճախ կիրառվում է շատ լայն իմաստով և ներառում է նաև դաստիարակության գաղափարը՝ ինչպես ներկայացված է այս դասին:

Դասի այս հատվածն ամփոփելիս համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են այս չորս բաժինների միջև եղած տարբերությունը, և որ դրանք բոլորն էլ վերաբերում են անհնազանդության հետևանքներին:

Քննարկելիս փորձի՛ր ամեն մեկի համար օրինակներ բերել և ցույց տալ, թե ինչպես են դրանք կապված Աստծուն հնազանդվելու և չհնազանդվելու հետ: Մատնանշի՛ր, որ Աստծո տված պատիժն ու դաստիարակությունը միշտ արդար է: Աստված արդարադատության Աստված է: Ցանկացած մարդ, ով չի հնազանդվում Աստծուն, արդյունքում «արդար դատվելու» հնարավորություն է ստանում:

8. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Ինչպիսի՞ն է Աստծո վերաբերմունքն այն մարդկանց հանդեպ, ովքեր չեն հնագանդվում Իր օրենքներին» (5-15 բույե), Ուսանողի ձեռնարկ, 48-51-րդ էջեր:

Ուսանողի ձեռնարկը հիմնական նյութ է տալիս այս հարցի հինգ պատասխանների համար: Նախքան քննարկելը, թե ինչ է այս մասին ասում Ուսանողի ձեռնարկը, դու կարող ես պարզապես այս հարցերը տալ քո ուսանողներին և ստանալ նրանց պատասխանները:

Քո ուսանողները, իրենց անցյալի հետ կապված, կարող են բոլորովին տարբեր ընկալումներ ունենալ այս հարցի վերաբերյալ: Փորձի՛ր այնպես անել, որ սա չվերածվի տեսական և աստվածաբանական քննարկման, այլ լինի գործնական և կենտրոնանա կյանքի իրական օրինակների վրա, լինի առօրյա կամ աստվածաշնչյան:

Այս քննարկման ընթացքում մենք ուզում ենք, որ մեր ուսանողները սկսեն հասկանալ, որ կարևոր է մեղքի հանդեպ ունենալ այն նույն վերաբերմունքը, ինչ Աստված ունի: Սա նշանակում է, որ մենք պետք է շատ աշխատենք, որպեսզի փոխենք մեր կարծիքը որոշակի մեղսալից արարքների վերաբերյալ: Անցյալում, հնարավոր է, նրանք վնաս չեն տեսել որոշ արարքներում մասնակցություն ունենալուց, իսկ հիմա, երբ աշխատում են հնագանդվել Աստծուն, պետք է այդ ամենին նայեն այնպես, ինչպես Աստված է նայում:

9. Դու կարող ես ժամանակ հատկացնել՝ քննարկելու համար Աստծո ողորմության և արդարադատության միջև եղած փոխհարաբերությունը:

Ահա մի հնարավոր տարբերակ այս փոխհարաբերությունը բացատրելու համար: Եթե մարդը մեղք գործի ու մերժի ընդունել կամ խոստովանել այն, Աստված կարձագանքի արդարադատությամբ և կտա այդ մարդուն իրեն արժանի դաստիարակություն: Բայց եթե այդ մարդը մեղք գործի և ընդունի այն ու խոստովանի Աստծուն, ապա սովորաբար Աստված կարձագանքի Իր ողորմությամբ: Երբ Աստված արձագանքում է Իր ողորմությամբ, Նա հաճախ «թեթև պատիժ» է տալիս այդ անհնագանդ արարքի համար:

Այս միտքը, թվում է, պարզ է դառնում՝ Հին Կտակարանից Դավթի և Մավուդի կյանքին նայելով: Մավուդը հրաժարվում է խոստովանել իր մեղքը, և Աստված շատ խիստ է վերաբերվում նրա հետ: Դավիթն իր թագավորության ընթացքում ավելի վատ մեղքեր է գործում (մարդկային տեսակետից), քան Մավուդը: Սակայն դավիթը միշտ խոստովանում է իր մեղքերը, և Աստված հաճախ ողորմություն է ցույց տալիս նրա հանդեպ:

Դավիթը, Բ Թագավորաց 12-ում, ծով պահեց ու աղոթեց երեխայի համար մինչև նրա մահանալը, իսկ հետո իր ծառաներին բացատրեց, որ նա դա անում էր, քանի որ մտածում էր, որ միգուցե Աստված ողորմեր իրեն և խնայեր երեխայի կյանքը: Դավիթը գիտեր Աստծո ողորմության մասին և սովորել էր ողորմության և անկեղծ խոստովանության միջև եղած կապի մասին:

10. Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդ՝ «Ավելի մոտ հայացք Աստծո օրենքներից մեկին» (10-15 րոպե):

Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 4-րդը կարող է օգտագործվել դասի այս հատվածում: Թող տարբեր ուսանողներ կիսվեն, թե ինչ փորձառություն են ունեցել այս նախագիծը լրացնելիս: Դու կարող ես քննարկումը կենտրոնացնել ղեկավարներին հնազանդվելու և չհնազանդվելու արդյունքում առաջացած անմիջական հետևանքների վրա: Դու կարող ես հեշտությամբ հղում կատարել վերջերս տեղի ունեցած անձնական օրինակներին՝ ներկայացնելու համար հնազանդվելու կամ չհնազանդվելու հետևանքները:

4

11. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

- Ա. Այս դասի անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ նրանց քաջալերելու վրա, որպեսզի ամեն ժամանակ հնազանդվեն Աստծուն: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի փնտրեն Աստծուն հնազանդվելու հետևանքները և օրհնությունները, որ Նա կուղարկի Իրեն հնազանդվողների վրա: Օգտագործի՛ր դասի սկզբում կազմած ցուցակները՝ տպավորիչ ձևով նրանց ցույց տալու համար այդ երկու ցուցակների միջև եղած նշանակալի տարբերությունը:
- Բ. Թող քո ուսանողներն Աստծուն ուղղված մի աղոթք գրեն՝ շնորհակալություն հայտնելով Նրան, որ Նա համբերատար, սիրող, ողորմած ու արդար Աստված է: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի փնտրեն Նրա օգնությունն ու գորությունը՝ այսօր և հետագա բոլոր օրերում Նրան հնազանդվելու համար:
- Գ. Քաջալերի՛ր քո ուսանողներին, որ գրի առնեն ու պահեն իրենց և շրջապատի մարդկանց կյանքի օրինակներ Աստծուն հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքների վերաբերյալ: Այս մտքերը կարող են ամենօրյա հիշեցումներ լինել այն մասին, թե որքան կարևոր է Աստծուն հնազանդվելը մեղքի փորձություններին հանդիպելիս, որոնք ուղղված են մեզ անհնազանդության մեջ ներքաշելուն:

12. Հանձնարարություններ:

Եթե դեռ չես արել, գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց,
Նախագիծ 3-րդի՝ «Աստծուն հնագանդվելու և չհնագանդվելու
հետևանքները», և Նախագիծ 4-րդի՝ «Ավելի մոտ հայացք Աստծո օրենքներից
մեկին» բաժինների համար:

13. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 5.

Ստուգարք

1. Նախաբան:

Ներկայացրե՛ք հաջորդ դասընթացը:

- Ա. Բաժանե՛ք Ուսուցման ուղեցույցը, կամ այլ նախագծեր, որոնք պետք է լրացվեն՝ նախքան դուք դրանք կուսուցանեք հաջորդ դասընթացի առաջին դասին:
- Բ. Թող ուսանողները բացեն իրենց նոր Ուսուցման ուղեցույցի վերջին էջը: Նրանք այնտեղ կգտնեն *Դասարանական Հանձնարարության Ցուցակի* չլրացված բլանկի մի օրինակ: Ասացե՛ք նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ժամկետները:
- Գ. Բաժանե՛ք նոր Ուսանողի ձեռնարկը և ասացե՛ք նրանց, թե որ էջն էք ուզում, որ նրանք կարդան՝ նախքան հաջորդ դասը սկսվելը:

5

2. Ստուգա՛րք անցկացրեք այս դասընթացի վերաբերյալ:

- 3. Եթե դեռ չեք արել, ապա վերադարձրե՛ք այն բոլոր հարցաշարերը և նախագծերը, որոնց դուք գնահատական եք դրել:

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպե՛ս օգտագործել Ուսանողի
ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման
ուղեցույցը:

Ստուգարք և Վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպե՛ս օգտագործել Ստուգարքն ու
Վկայականը:

Անուն _____

Հնազանդություն Աստծուն

Անսաթիվ _____

Ստուգարք, 5-րդ խմբագրում

Դասարան _____

_____ դասարան

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 2 միավոր)

Ցուցումներ. Գրի՛ր X եթե պատասխանը ճիշտ է:

Գրի՛ր O եթե պատասխանը սխալ է:

1. _____ Աստվածաշնչի մեծագույն օրենքը մեզ ասում է՝ սիրել մեր դրացուն այնպես, ինչպես Աստված է մեզ սիրում:
2. _____ Աստծուն հնազանդվելն ամենակարևոր բաներից մեկն է, որ դու պետք է անես որպես քրիստոնյա:
3. _____ Աստված ամեն անգամ բարկանում է, երբ դու չես հնազանդվում Նրա օրենքներից որևէ մեկին:
4. _____ Դու կարող ես հնազանդվել Աստծո բոլոր օրենքներին, սակայն չսիրել Աստծուն:
5. _____ Ամենակարևորներից մեկը, որ Աստված մեզ ասում է, որ անենք, Նրան սիրելն է:
6. _____ Աստված սիրում է միայն քրիստոնյաներին:
7. _____ Քանի որ Աստվածաշունչը ոչ մի օրենք չունի ծիսելու վերաբերյալ, քրիստոնյաների համար ծիսելը նորմալ է:
8. _____ Աստված ուզում է, որ բոլորը ճշմարիտ քրիստոնյա դառնան:
9. _____ Միակ ձևը, որով քրիստոնյան կարող է իմանալ, թե ինչ է Աստված ուզում, որ նա անի, Աստծուց տրված հատուկ նշաններն են:
10. _____ Եթե ուզում ես Աստծո օրենքներին հնազանդվելու մեջ հաջողվել, դու պետք է սիրես քո առաջնորդներին:
11. _____ Աստծուն չի հետաքրքրում քո վերաբերմունքը: Նրան միայն հետաքրքրում է այն, որ հնազանդվես Իրեն:
12. _____ Աստված անմիջապես պատժում է քեզ, երբ դու անհնազանդ ես լինում Նրա օրենքներին:
13. _____ Լավագույն ձևը Աստծուն ցույց տալու, որ սիրում ես Նրան, Նրա օրենքներին հնազանդվելն է:
14. _____ Աստված ուզում է, որ դու ունենաս վերաբերմունքներ, որոնք քեզ համար կհեշտացնեն Աստծո օրենքներին չհնազանդվելը:

15. _____ Միշտ էլ հեշտ է Աստծո բոլոր օրենքներին հնազանդվելը:
16. _____ Քեզ համար ավելի կարևոր է Աստծո սերը ցույց տալ մարդկանց, քան քո սերը ցույց տալ Աստծուն:
17. _____ Այսօր քրիստոնյաները պետք է հնազանդվեն միայն Նոր Կտակարանի օրենքներին:
18. _____ Լավագույն պատճառը, թե ինչու դու պետք է հնազանդվես Աստծո օրենքներին, այն է, որ դժոխք չգնաս:

Բազմակի ընտրությամբ հարցեր (յուրաքանչյուրը 2 միավոր):

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը և համապատասխան տառը գրի՛ր հարցի դիմացի գծիկի վրա:

1. _____ Աստվածաշնչի մեծագույն օրենքն ասում է.
- Ա. Միրի՛ր քո ընկերոջը:
 - Բ. Միրի՛ր Աստծուն:
 - Գ. Միրի՛ր բարեկամներին:
2. _____ Եթե մարդն ըմբոստ վերաբերմունք ունի Աստծո հանդեպ, նա ամենաշատը պետք է աշխատի զարգացնել.
- Ա. Հարգալից վերաբերմունք:
 - Բ. Ծառայի վերաբերմունք:
 - Գ. Երախտագետ վերաբերմունք:
 - Դ. Լուռ վերաբերմունք:
3. _____ Աստծո օրենքներին հնազանդվելու քո լավագույն դրդապատճառն այն է, որ.
- Ա. Միրում ես ինքդ քեզ:
 - Բ. Դու քրիստոնյա ես:
 - Գ. Չես ուզում գնալ դժոխք:

Կարճ շարադրությամբ հարցեր:

1. Թվարկի՛ր երեք գործողություն, որոնք դու կարող ես կատարել՝ ցույց տալու համար քո սերն Աստծո հանդեպ (6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

Ա. _____

Բ. _____

Գ. _____

Կարճ շարադրությամբ հարցեր (շարունակելի):

2. Բացատրի՛ր երկու քայլերը, որոնք դու կարող ես անել՝ ցույց տալու համար քո լուռ վերաբերմունքն Աստծո հանդեպ:
(10 միավոր, յուրաքանչյուրը 5 միավոր)

Ա. _____

Բ. _____

3. Թվարկի՛ր Աստծուն և Նրա օրենքներին հնազանդվելու հինգ արդյունքներ:
(յուրաքանչյուրը 2 միավոր)

Ա. _____

Բ. _____

Գ. _____

Դ. _____

Ե. _____

4. Թվարկի՛ր Աստծուն և Նրա օրենքներին չհնազանդվելու հինգ արդյունքներ:
(յուրաքանչյուրը 2 միավոր)

Ա. _____

Բ. _____

Գ. _____

Դ. _____

Ե. _____

5. Պատմի՛ր, թե ինչ ձևով ես սովորել գործնականում կիրառել այն, ինչ դու սովորեցիր այս շաբաթ այս դասընթացից: Աշխատի՛ր հստակ լինել:
(տասը միավոր)

**Հնագանդություն Աստծուն
Ստուգաք 5
Պատասխաններ**

Էջ 1.

Ճիշտ-սխալ հարցեր
(յուրաքանչյուրը 2 միավոր)

1. 0 սխալ
2. X ճիշտ
3. 0 սխալ
4. 0 սխալ
5. X ճիշտ
6. 0 սխալ
7. 0 սխալ
8. X ճիշտ
9. 0 սխալ
10. X ճիշտ
11. 0 սխալ
12. 0 սխալ
13. X ճիշտ
14. 0 սխալ

Էջ 2.

15. 0 սխալ
16. 0 սխալ
17. 0 սխալ
18. 0 սխալ

Բազմակի ընտրությամբ հարցեր
(յուրաքանչյուրը 2 միավոր)

1. Բ
2. Ա
3. Բ

Կարճ շարադրությամբ հարցեր

1. 6 միավոր (յուր. 2 միավոր)
Առաջարկվող պատասխաններ.
 1. Հնագանդվել Աստծո օրենքներին:
 2. Հնագանդվել Աստծո օրենքների հետևում եղած սկզբունքներին:
 3. Կատարել Աստծո կամքը:

**Հնազանդություն Աստծուն
Ստուգարք 5
Պատասխաններ**

Էջ 3.

Կարճ շարադրությամբ հարցեր

2. 10 միավոր (յուրաքանչյուրը 5 միավոր)
Առաջարկվող պատասխաններ.
 1. Վստահի՛ր Աստծուն:
 2. Մի՛ վիճաբանիր առաջնորդներիդ հետ:
 3. Կամավոր հնազանդվի՛ր Աստծուն: Աստծուց բացատրություններ մի՛ պահանջիր նախքան Նրան հնազանդվելը:
3. 10 միավոր (յուրաքանչյուրը 2 միավոր)
Անձնական պատասխաններ
4. 10 միավոր (յուրաքանչյուրը 2 միավոր)
Անձնական պատասխաններ
5. 10 միավոր
Անձնական պատասխաններ

Էջ 4.

6. Անգիր համարներ
12 միավոր, 6 միավոր յուրաքանչյուր համարը

Մարկոս 12:30

Հովհաննես 13:34-35

Շնորհավորում ենք

-ին, առ այն, որ նա ավարտել է

Հնազանդություն Աստծուն

դասընթացի ուսումնական պահանջները:

Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

Շնորհավորում ենք

-ին, առ այն, որ նա ավարտել է

Հնազանդություն Աստծուն

դասընթացի ուսումնական պահանջները:

Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____